USAID
FROM THE AMERICAN PEOPLE

GLOSSARY
of Energy-Related Terms

Էներգետիկ բնագավառում շրջանառվող տերմինների
ԲԱՌԱՐԱՆ

JANUARY 2007

This publication was produced for review by the United States Agency for International Development. It was prepared by PA Government Services Inc.

The author's views expressed in this publication do not necessarily reflect the views of the United States Agency for International Development or the United States Government.
USAID Contract No. EEP-I-00-03-00008-00

Հրատարակությունում արտահայտված հեղինակի տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Զարգացման Գործակալության կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության տեսակետների հետ:

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

GLOSSARY
of Energy-Related Terms

Էներգետիկ բնագավառում շրջանառվող տերմինների
ԲԱՌԱՐԱՆ

YEREVAN 2007

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1990-ական թվականների կեսերից Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Զարգացման Գործակալությունը (ԱՄՆ ՄԶԳ) նշանակալի օգնություն է տրամադրել Հայաստանի էներգետիկ համակարգի բարեփոխման և առևտրայնացման նպատակով: Բազմատեսակ միջոցառումներ և տեխնիկական օժանդակության ծրագրեր են իրականացվել, որոնց նպատակն է եղել հիմնադրել թափանցիկ, շուկայամետ էներգետիկ համակարգ: Այդ օգնությունը անշուշտ եղել է ազդեցիկ և ԱՄՆ ՄԶԳ-ի օգնությամբ Հայաստանի էներգետիկ համակարգը ունեցել է ակնառու առաջընթաց:

Ներկայումս «Հայաստանում էլեկտրաէներգետիկ ոլորտի բարեփոխումների ամրապնդման և էներգետիկ անվտանգության ապահովման ծրագրի» շրջանակներում ԱՄՆ ՄԶԳ-ն աջակցում է ՀՀ Կառավարության բարեփոխմանն ուղղված ջանքերին՝ բարձրացնելու էներգետիկ համակարգի անվտանգությունը, թափանցիկությունը և ֆինանսական կայունությունը: Ծրագրի առանցքային կիզակետերից է բարելավել հանրության ընկալումը և մասնակցությունը էներգետիկ բնագավառում ՁԼՄ-ների օգնությամբ լուսաբանման, հասարակական երկխոսության և տեղեկատվության տարածման միջոցներով:

Սպառողական խմբերի, տարբեր հասարակական կազմակերպությունների և ՁԼՄ-ների հետ շփումներից պարզ դարձավ, որ Հայաստանի էներգետիկ ոլորտում բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվությունը և դրա հասանելիությունը սահմանափակ են: Այս տեղեկատվական բացը լրացնելու, ինչպես նաև էներգետիկ ոլորտում տեղի ունեցող դրական փոփոխությունների վերաբերյալ իրազեկվացությունը բարձրացնելու նպատակով, ԱՄՆ ՄԶԳ/PA-ի ծրագիրը մշակել է «էներգետիկ ոլորտի բառարան»: Բառարանում ներառված տերմիններից շատերը երբևիցե չեն սահմանվել հայերեն լեզվով: Բառարանը չի կարելի համարել համապարփակ, սակայն ակնկալում ենք, որ այն պարզ ուղեցույց կլինի Հայաստանում կիրառվող ժամանակակից էներգետիկ տերմինները և գործընթացները հասկանալու համար: ԱՄՆ ՄԶԳ/PA-ը հույս ունեն, որ այս բառարանը կլրացնի առկա գիտելիքները և կօգնի Հայաստանի էներգետիկ բնագավառը դարձնել առավել հասանելի և լավագույնս հասկանալի:

INTRODUCTION

Since the mid-1990s, the United States Agency for International Development (USAID) has provided critical assistance to the reform and commercialization of the energy sector in Armenia. Various activities and technical assistance programs have been carried out designed to lay the foundation for a transparent, market-driven energy sector. This assistance has proved extremely influential, and, with USAID's support, Armenia's energy sector has achieved notable progress.

Most recently, under the auspices of the "Program to Strengthen and Enhance Energy Security in Armenia" implemented by PA Government Services Inc. (PA), USAID is assisting the Government of Armenia's (GoA) reform efforts to enhance the security, transparency and financial sustainability of the energy sector. A core area of focus for the program has been the improvement of public understanding and participation in the energy sector through increased media outreach, public dialogue, and information sharing.

Based on interaction with consumer groups, various NGOs, and the media, it there is limited access to information on energy sector reform in Armenia. In order to fill this information gap and to incrense awareness of the positive changes the energy sector is experiencing, the USAID/PA program has developed an *Armenian-English Energy Sector Glossary*. This glossary, the first of its kind in Armenian, is designed to serve as a reference for both specialists and non-specialists interested in the terminology and technical definitions currently employed in the energy sector. Many of the terms included in the glossary have not been previously defined in Armenian. The glossary is by no means comprehensive but it was created to be an easy access guide to contemporary energy terms and processes applicable to Armenia. In its small way, USAID/PA hopes the glossary will supplement existing knowledge and will help make the Armenian energy sector more accessible and better understood.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 2

Տերմինների բառարան – Հայերեն 5

Տերմինների բառարան – Անգլերեն 38

CONTENTS

Introduction 3

Glossary Terms – Armenian 5

Glossary Terms – English 38

1. **Ազատ մուտք – *Open Access* –** Ազատ մուտքի պարտավորությունը դրվում է կարգավորող մարմնի կողմից, որի շնորհիվ էլեկտրաէներգետիկ շուկայի նոր մասնակիցներին առանց խտրականության նույնպես թույլատրվում է օգտվել փոխադրող և բաշխող հզորություններից՝ գանձելով ծախսի հիման վրա գոյացող վճար:

2. **Ածուխ – *Coal* –** Հեշտորեն այրվող սև կամ մուգ շագանակագույն քարե բեկորներ, որոնց միացությունը՝ ներառյալ խոնավությունը, պարունակում է ավելի քան 50 տոկոս քաշով և 70 տոկոս ծավալով ածխաթթու նյութեր: Այն առաջանում է բույսերի մնացորդներից, որոնք խտացված են, ծանրացված և ջերմության ու ճնշման ազդեցության ներքո, որոշակի երկրաբանական ժամանակի ընթացքում, քիմիականորեն փոփոխված են:

3. **Ամբարտակ – *Dam* –** Ջրի հոսքը և մակարդակը կարգավորելու համար գետերի կամ ջրուղիների վրա ուղղահայաց կառուցվող ֆիզիկական խոչընդոտ: Նման շինություններ կարող են կառուցվել ջրառատությունը կառավարելու, ոռոգման կարիքները հոգալու, հիդրոէլեկտրաէներգիա արտադրելու կամ նույնիսկ հանգստյան գոտի ստեղծելու նպատակով:

4. **Այրում – *Combustion* –** Քիմիական թթվածնայնացում, որն ուղեկցվում է լույսի և ջերմության արձակմամբ:

5. **Անհապաղ ապամոնտաժում – *DECON* –** Շահագործումից դուրսբերման մեթոդ, որի դեպքում ռադիոակտիվ աղտոտիչներ պարունակող միջուկային կայանի սարքավորումները, կառույցները, մասերը և կայանի գտնվելու վայրը հեռացվում են և անվտանգ թաղվում ցածր ռադիոակտիվության գերեզմանոցում կամ վարակազերծվում են այնքան, որ դադարեցումից կարճ ժամանակ անց հնարավոր լինի իրականացնել նյութերի անսահմանափակ արտանետում:

6. **Անհրաժեշտ հասույթ – *Necessary Output* –** Էլէներգիայի վաճառքից ստացված հասույթը այն մեծությունն է, որը պետք է բավարարի կարգավորող մարմնի կողմից հաստատված պայմաններին: Այն ունի երեք հիմնական բաղադրիչներ; 1. Հուսալի անվտանգ շահագործման և պահպանման ծախսեր; 2. Հիմնական միջոցների մաշվածության հատուցում; 3. Օգտագործվող ակտիվների դիմաց ողջամիտ շահույթի ապահովում:

7. **Անմիջական մուտքի իրավունք – *Direct Access* –** Սա վերջնական սպառողի հնարավորությունն է հոսանքը գնել անմիջապես մեծածախ շուկայից՝ շրջանցելով էլեկտրաէներգիա բաշխող ընկերության ծառայությունները (տես նաև «մանրածախ շուկայում մրցակցություն»):

8. **Անվտանգ պահպանում – *SAFSTOR* –** Շահագործումից դուրսբերման մեթոդ, որի դեպքում միջուկային կայանը բերվում է ապահով, կայուն վիճակի և այդ վիճակում պահվում երկար ժամանակ (օրինակ՝ 40-60 տարի), որից հետո այն աստիճանաբար ակտիվազերծվում է և ապամոնատժվում այն աստիճան, որից հետո հնարավոր է դառնում ռադիոնուկլիդների անսահմանափակ քանակով արտանետումը:

9. **Անվտանգության գոտիներ – *Safety Zones* –** էներգետիկայի բնագավառի օբյեկտների (կառույցների, տեղակայանքների, կապի, հաղորդման (փոխադրման) ու բաշխման գծերի եւ այլն) շրջակա տարածքները, որոնք նախատեսվում են օբյեկտների բնականոն գործունեությունը, շահագործող անձնակազմի եւ քաղաքացիների կյանքի անվտանգությունը, այլ օբյեկտների նկատմամբ փոխադարձ անվտանգությունն ապահովելու նպատակով:

10. **Անվտնագության համակարգեր – *Safety Related* –** Վարչական կառավարում, վարչական փաստաթղթեր, շահագործման կանոններ, համակարգեր, կառուցվածքներ և բաղադրիչներ, որոնք նախագծված են մեղմացնելու նախատեսված վթարների հետևանքները, որոնք կարող են առաջացնել անտեղի ռիսկ մարդկանց կյանքին և անվտանգությանը:

11. **Աշխատանքի արդյունքի վրա հիմնված կարգավորում – *Performance-based Regulation* (*PBR*) –** Այսպես է կոչվում սակագներ սահմանելու այն մեխանիզմը, որով փոխհատուցումը (սովորաբար դա շահույթն է) փորձում են կապել ցանկալի արդյունքների կամ նպատակների հետ: Այս մեթոդով սակագները կամ սակագների բաղադրիչները որոշակի ժամանակահատվածի համար սահմանելիս՝ ավելի շատ հիմնվում են արտաքին ցուցանիշների, քան ծառայության արժեքի վրա: Մեկ այլ սահմանման համաձայն, այսպես է բնութագրվում կարգավորման ավելի թեթև տեսակը, որը սակավ ծախսատար է և ավելի քիչ է դառնում անհամաձայնությունների և դատավարությունների առարկա:

12. **Աշխատած միջուկային վառելիք – *Spent Nuclear Fuel* –** Միջուկային ռեակտորից հեռացվող վառելիք, որը տնտեսական կամ այլ

պատճառներով այլևս չի կարող նպաստել էներգիայի արտադրությանը:

13. **Ապակարգավորում** – ***Deregulation*** **–** Նախկինում կարգավորվող համակարգի կամ դրա որևէ հատվածի վրայից կարգավորման վերացում:

14. **Առավելագույն թույլատրելի /էլեկտրաէներգիայի/ փոխհոսք** – ***Power Transfer Limit*** **–** Սա էլեկտրաէներգիայի այն առավելագույն քանակն է, որը հնարավոր է փոխանցել էլեկտրաեներգետիկ համակարգի երկու կետերի միջև, կամ մեկ էլեկտրական համակարգից մյուսը՝ առանց գերբեռնելու երկու համակարգերի որևէ սարքավորում:

15. **Առևտրային հաշվառում** – ***Commercial Metering*** **–** վճարման ենթակա էլեկտրաէներգիայի և հզորության հաշվառում:

16. **Ատոմային էներգիա** – ***Nuclear Energy*** **–** Սա այն էներգիան է, որն առաջ է գալիս ուրանի պես ռադիոակտիվ նյութերի ատոմների մասնիկների տրոհումից:

17. **Ատոմային ռեակտոր** – ***Nuclear Reactor*** **–** Սա այնպիսի սարքավորում է, որի ներսում հնարավոր է մեկնարկել, կարգավորել և որոշակի մակարդակի վրա պահել ատոմի տրոհման շղթայաձև ռեակցիան: Ռեակտորի մեջ են մտնում վառելանյութը (տրոհման ենթակա ռադիոակտիվ նյութը); զսպեցնող նյութը, որը հնարավոր է դարձնում կարգավորել տրոհման աստիճանը; բարձր ճնշմանը դիմացող ծանր պատերով կառույց, որում տեղադրված են ռեակտորի բոլոր տարրերը; աշխատող անձնակազմի անվտանգությունն ապահովող պահպանիչ վահանակը; ռեակտորից ջերմությունը հանելու համակարգը և տարբեր գործիքների համալիր, որով կարգավորվում է ռեակտորային համակարգը:

18. **Ատոմակայանի շահագործումից դուրս բերում** – ***Decommissioning*** **–** Միջուկային կայանի փակման գործընթաց, որին հետևում է կայանում մնացորդային ռադիոակտիվության նվազեցում մինչև այն աստիճան, երբ հնարավոր է դառնում ռադիոակտիվ նյութերի անսահմանափակ արտանետումը:

19. **Արտադրող ընկերություն** – ***Generation Company*** **(*Genco*)** – ՀՀ էներգետիկայի մասին օրենքի համաձայն, Արտադրողը՝ էլեկտրաէ-

ներգիայի (հզորության) արտադրության Լիցենզիա ունեցող իրավաբանական անձ է: Այս տերմինով բնութագրվում է կարգավորվող կամ չկարգավորվող (կախված համակարգի կառուցվածքից) ձեռնարկություն, որը շահագործում և պահպանում է գոյություն ունեցող կայանները:

20. **Արտադրող տեղակայանք – *Generating Facility* –** Գոյություն ունեցող կամ ծրագրված այն տեղանքն է կամ տարածությունը, որտեղ արտադրվում կամ արտադրվելու է էլեկտրական էներգիա:



21. **Արտադրող հզորություն – *Generating Capacity*** – էլեկտրական էներգիայի այն քանակությունն է, որը կարող է արտադրել էլեկտրակայանը: Վատտով, կիլովատտով կամ Մեգավատտով արտահայտված էլեկտրաէներգիայի արտադրության հնարավորությունն է: Հզորությունը կարող է լինել տեղակայված (առկա կառուցված); հասանելի (ցանկացած պահին ցանցին միանալու պատրաստ); աշխատանքային (տվյալ պահին օգտագործվող) և պահուստային (հասանելի հզորության տվյալ պահին չօգտագործվող մասն է):

Տեղակայված հզորություն = հասանելի (աշխատանքային + պահուստային) + վերանորոգվող+ կոնսերվացված

22. **Արտադրության ծախսեր – *Production Costs* –** Սրանք այն ծախսերն են, որոնք առաջանում են էներգետիկ ձեռնարկությունների շահագործման և պահպանման գործառույթներն իրականացնելիս և կապված են սարքավորումների և այլ միջոցների հետ՝ ներառյալ մաշվածության ծախսերը, օժանդակ սարքերի ու սարքավորումների շահագործման ու պահպանման հետ կապված ծախսերը և բազմաթիվ այլ ծախսեր: Ստորև ներկայացված են արտադրության ծախսերի որոշ օրինակներ՝ էներգետիկ համակարգի սարքավորումները շահագործող և պահպանող անձնակազմի աշխատավարձերը; վերանորոգման և վերականգնման ծախսեր; կայանների և նրանց սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ նյութերի, պահեստամասերի և օգտագործվող վառելիքի և մատուցվող ծառայությունների հետ կապված ծախսեր; հարկային մասհանումներ և այլն:

23. **Արտահանման (ներկրման) կետ – *Export (Import) Point*** – Միջհամակարգային էլեկտրահաղորդման գծի կետ որտեղ իրականացվում է էլեկտրաէներգիայի արտահանումը (ներկրումը):



24. **Արևային էներգիա – *Solar Energy*** – Արևի արտացոլվող էներգիան է, որը կարող է փոխակերպվել էներգիայի այլ տեսակների, ինչպիսիք են ջերմությունը կամ էլեկտրականությունը:

25. **Բազմանպատակային նախագիծ – *Multiple Purpose Project*** – Այս տերմինով նկարագրվում են այնպիսի տեղակայանքներ, որոնք նախատեսված են ծառայելու մի քանի նպատակների: Օրինակ՝ հիդրոէներգետիկայում, բացի էլեկտրաէներգիայի արտադրությունից, այդ կառույցները ծառայում են ոռոգման, ջրամատակարարման, ջրի որակի հսկողության նպատակներին, ինչպես նաև ձկների ու այլ կենդանիների համար բնական պայմաններ ապահովելուն:

26. **Բազմանպատակային ջրաբմար – *Multiple Purpose Reservoir*** – Պահեստավորված ջուրը և դրա օգտագործումը կառավարվում է ջրի խնայողության առավել հեռանկարային նորմերից ելնելով, որով լուծվում են ոչ միայն ջրի հսկման պարզ խնդիրները, այլև բազմաթիվ այլ խնդիրներ: Նման խնդիրների շարքին են պատկանում հեղեղումների կանխումը, հիդրոէլեկտրաէներգիայի արտադրությունը, ոռոգումը, հանգստյան գոտիների ստեղծումը և բնության պահպանությունը:

27. **Բաշխիչ ցանց – *Distribution Utility (Disco, Distribution Network)*** – բաշխման լիցենզիա ունեցող անձի կողմից շահագործվող էլեկտրական էներգիայի կամ բնական գազի կամ ջերմային էներգիայի բաշխման գծերի, ենթակայանների, գազակարգավորիչ հանգույցների և այլ սարքավորումների միասնական համակարգ, որի միջոցով էլեկտրական էներգիան կամ բնական գազը կամ ջերմային էներգիան արտադրողից և (կամ) հաղորդողից հասցվում է սպառողներին և որի կառավարումն իրականացնում է բաշխման գործունեության լիցենզիա ունեցող անձը:

28. **Բարձր ակտիվության թափոններ – *High-level Waste*** – Բարձր ակտիվության ռադիոկատիվ թափոններ նշանակում է ճառագայթված (աշխատած) միջուկային վառելիք, (2) հեղուկ թափոններ, որոնք

առաջանում են կայանի առաջին ցիկլի գործունեության հեղուկ արտազատումներից, և խտացված թափոններ մյուս ցիկլերի արտազատումներից, ինչպես նաև այն կայաններում, որտեղ վերամշակվում է ճառագայթված միջուկային վառելիքը, և (3) կարծր նյութեր, որտեղ փոխակերպվել են հեղուկ թափոնները: Բարձր ակտիվության թափոններն հիմնականում լինում են առևտրային միջուկային կայաններից առաջացող աշխատած միջուկային վառելիքի տեսքով: Այս թափոնների թվին են պատկանում նաև պաշտպանական գործունեությունից առաջացող վերամշակված բարձր ակտիվության թափոնները, ինչպես նաև փոքր քանակությամբ առևտրային նպատակներով վերամշկված բարձր ակտիվության թափոնները:

29. **Բարձրավոլտ էլեկտրացանցեր (ԲԷՑ) կամ փոխադրող ընկերություն – *Transmission Company* –** Այսպես է անվանվում բարձրավոլտ փոխադրող էլեկտրական ցանցի շահագործման համար պատասխանատու անկախ ընկերությունը:

30. **Բեռ** (էլեկտրական) **– *Load*** *(electric)* **–** Սա էլեկտրական էներգիայի այն քանակությունն է, որն առաքվում կամ պահանջվում է համակարգի որոշակի կետում: Պահանջարկը սկզբնապես ձևավորվում է ելնելով սպառողների էներգասպառող սարքավորումների հզորությունից:

31. **Բեռնաթափում – *Load Shedding* –** Ավտոմատացված կամ կարգավարողի հրահանգով համապատասխան բեռի անջատում, որը կիրառվում է էլեկտրաէներգետիկ համակարգի կամ բաշխիչ ցանցի այն վթարների դեպքում, երբ առկա պահուստային հզորությունները անկարող են կանխել սարքավորումների վնասումը կամ էլեկտրաէներգետիկ համակարգի մարումը:

32. **Բեռի կառավարման տեխնիկա – *Load Management Technique* –** Այսպես են կոչվում համակարգի պահանջարկի կառավարման հետ կապված այն միջոցառումները, որոնք ուղղված են էլեկտրաէներգետիկ համակարգում կիլովատտով արտահայտված առավելագույն պահանջարկը կրճատելուն: Նպատակն է ավելի լավ համապատասխանեցնել համակարգի հնարավորությունները՝ որոշակի ժամի, օրվա, շաբաթի, սեզոնի կամ տարվա կտրվածքով:

33. **Բեռի կենտրոններ – *Load Centers* –** Այսպես է կոչվում այն աշխարհագրական տեղամասը, որտեղ վերջնական սպառողը կլանում է էլեկտրաէներգիայի մեծ քանակություն:

34. Բեռի կոր – *Load Curve* – Այս կորը ցույց է տալիս առաքված էլեկտրաէներգիայի քանակը որոշակի ժամանակահատվածում: Այս կորով փաստորեն նկարագրվում է բեռի մեծության տատանումը որոշակի ժամանակահատվածի ընթացքում:

35. Բիոգազային էլեկտրակայան – *Biogas Power Plant* – Կենսամասայից առաջացող գազի օգտագործման վրա հիմնված էներգետիկ սարք, որի բավարար լինելու դեպքում հնարավոր է արտադրել էլեկտրական եներգիա:

36. Բնական գազ – *Natural Gas* – Բնական ճանապարհով առաջացող հիդրո և ոչ հիդրոկարբոնատների խառնուրդ, որը գոյանում է երկրաբանական ծակոտիներ հիշեցնող ընդերքներում՝ հաճախ նավթի հետ մեկտեղ: Հիմնական բաղադրամասը մեթանն է:

37. Բնական մենաշնորհ – *Natural Monopoly* – Սա մի իրավիճակ է, երբ մեկ ընկերությունը կարողանում է մատուցել համապատասխան ծառայություն այնպիսի ցածր արժեքով, որ չի կարող անել բազմաթիվ ընկերությունների և ոչ մի համադրություն: Բնական մենաշնորհները առաջանում են այն ճյուղերում, որոնցում ձեռնարկությունների չափերի մեծանալու հետ միաժամանակ երևում է միջին երկարաժամկետ ծախսերի նվազում: Տնտեսագիտական տեսության համաձայն, երբ ի հայտ են գալիս բնական մենաշնորհի բնորոշիչները, պետականորեն կարգավորվող հանրային մենաշնորհը, արդարացնում է իրեն:

38. Գազի խողովակաշար – *Gas Pipeline* – Սա խողովակների շարան է, որի վերջում տեղադրված են այնպիսի սարքավորումներ, ինչպիսիք են փականները, կոմպրեսորային կայանները, հաղորդակցության սարքերը և չափող սարքերը: Այս համակարգով բնական գազը տեղափոխվում է մեկ կետից մյուսը՝ սովորաբար արդյունահանման կամ վերամշակման ձեռնարկություններին մոտ գտնվող կետից դեպի այլ խողովակաշար կամ սպառման կետեր: Այս տերմինով է երբեմն անվանվում նաև այն ընկերությունը, որը զբաղվում է այս համակարգի շահագործմամբ:

39. **Գիգավատտ – *Gigawatt* (*GW*) –** Մեկ միլիարդ վատտ կամ հազար մեգավատտ:

40. **Գեոթերմալ էներգիա – *Geothermal Energy*** – Երկրագնդի ընդերքում տեղի ունեցող բնական գործընթացներից առաջացող ջերմային էներգիա: Այն կարող է ստացվել տաք աղբյուրներից, ընդերքի խորքում գտնվող տաք ջրի պահեստարաններից, կամ քարաժայռերը կոտրելով ճեղքելուց:



41. **Գետի հոսանքով աշխատող հիդրոէլեկտրոկայան – *Run-of-river Hydroelectric Plant* –** Սրանք այն կայաններն են, որոնք հոսանք արտադրելու համար օգտագործում են գետի բնական հոսքը, որոնք ջրամբար ընդհանրապես չունեն, կամ այն շատ փոքր է:

42. **Գերբեռնվածություն – *Congestion* –** Սա մի իրավիճակ է, որն առաջ է գալիս, երբ նախատեսված ժամանակացույցով էլեկտրական էներգիայի որոշակի քանակության միաժամանակյա փոխադրման համար տեղափոխման հզորությունները չեն բավարարում:

43. **Դանդաղացուցիչ – *Moderator* –** Նյութ, ինչպես օրինակ թեթև ջուր, ծանր ջուր կամ գրաֆիտ, որն օգտագործվում է ռեակտորում՝ դանդաղեցնելու նեյտրոնների ուժեղ հոսքը՝ դրանով իսկ մեծացնելով տրոհման հավանականությունը:

44. **Ենթակայան – *Substation* –** Էլեկտրատեղակայանք , որում տեղակայված սարքավորումների միջոցով միացվում/անջատում, փոփոխվում կամ կարգավորվում է էլեկտրական լարումը:

45. **Ենթասպառող – *Subcustomer* –** Այսպես է կոչվում այն սպառողը, որի էներգամատակարարումն իրականացվում է այլ սպառողի ցանցերից, և որն ունի սահմանված կարգով կնքված՝ էներգիայի կամ բնական գազի մատակարարման երկկողմ կամ եռակողմ պայմանագիր:

46. **Զուգահեռ հոսք – *Parallel Path Flow* –** Երկու տարբեր էլեկտրական համակարգերի կամ միևնույն համակարգի տարբեր տարրերի միջև փոխադրող հզորություններով էլեկտրաէներգիայի զուգահեռ հոսք:

47. **էլեկտրաէներգետիկական շուկային մատուցվող ծառայություններ – *Power Market Services* –** էլեկտրաէներգետիկական շուկայի

գործունեությունը կանոնակարգելուն եւ դրա թափանցիկությունն ապահովելուն ուղղված կենտրոնացված ծառայություններ:

48. **էլեկտրաէներգետիկ համակարգի էներգիայի կորուստներ – *Electrical System Energy Losses* –** Սա էներգիայի այն քանակությունն է, որը կորչում է էլեկրաէներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման փուլերում:

49. **էլեկտրաէներգետիկ համակարգի օպերատոր – *Power System Operator*** – Սա օպերատոր է, որը պատասխանատու է էլեկտրաէներգետիկ համակարգի յուրաքանչյուր պահի դրությամբ հավասարակշռությունն ապահովելու համար: Համակարգի անկախ օպերատորն իր գործառույթը կատարում է՝ վերահսկելով էլեկտրակայանները, որպեսզի ապահովի բեռի համապատասխանությունը համակարգում առկա ռեսուրսների հետ: Այս գործընթացը անվանվում է կարգավարում: ՀՀ էներգետիկայի մասին օրենքի համաձայն՝ էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձին տրվում է բացառիկ իրավունք՝

ա) էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատիվ տեխնոլոգիական և տնտեսական կարգավարման,

բ) էլեկտրաէներգիայի արտադրության, ներկրման, արտահանման և տարանցման գործառույթների համակարգային պլանավորման ու կոորդինացման,

գ) էլեկտրաէներգետիկական համակարգում համակարգային նշանակության կառավարման և պաշտպանության սարքերի նախադրվածքների հաշվարկման, դրանք լիցենզավորված անձանց առաջադրման և դրանց աշխատանքի հսկման՝ համաձայն լիցենզիայի պայմանների և շուկայի կանոնների,

դ) տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի զուգահեռ աշխատանքի ապահովման:

50. **էլեկտրաէներգիայի կորուստ – *Power Loss* –** Երկու կետերի միջև էներգիայի փոխանցման արդյունքում էլեկտրաէներգիայի մուտքային ու ելքային քանակությունների տարբերությունն է:

51. **էլեկտրաէներգիայի չնախատեսված փոխանակում – *Inadvertent Power Exchange* –** Սա էլեկտրաէներգիայի այնպիսի փոխանակում է, որի մասին նախապես պայմանավորվածություն չի եղել կամ փոխանակման քանակը չի համապատասխանել պայմանավորվածությանը:

52. **էլեկտրական համակարգաստեղծ ցանց – *Grid* –** էլեկտրաէներգիա արտադրողների և փոխադրողների հաղորդալարերի և ենթակայանների փոխկապակցված համակարգ, որը կառավարվում է այնպես, որ էլեկտրաէներգիայի արտադրությունը կարգավորվի տարբեր կետերից համակարգին միացած հաճախորդների պահանջներին համապատասխան:

53. **էլեկտրական էներգիա արտադրող կայան – *Electric Generator* –** Կայան, որն արտադրում է միայն էլեկտրաէներգիա՝ արտահայտված կիլովատտ/ժամով կամ մեգավատտ/ժամով: Էլեկտրակայանները կարող են լինել համակարգային և անկախ:

54. **էլեկտրական էներգիա – *Electric Energy* –** Սա էլեկտրական հոսանքի ունակությունն է՝ արտադրելու որոշակի աշխատանք, ջերմություն, լույս կամ էներգիայի որևէ այլ տեսակ: Էլեկտրական էներգիայի չափման միավորն է կիլովատտ ժամը (կվտժ):

55. **էլեկտրական հոսանք – *Electric Current* –** Սա էլեկտրական լիցքերի ուղղորդված հոսքն է: Չափման միավորն է ամպերը:

56. **էներգաարդյունավետություն – *Energy Efficiency* –** Այս տերմինով բնութագրվում է այն իրավիճակը, երբ նույն աշխատանքը կատարելու համար ավելի քիչ էներգիա կամ էլեկտրաէներգիա օգտագործվում: Տերմինը նաև վերաբերում է էլեկտրաէներգիան ավելի արդյունավետ օգտագործելու ծրագրերին, այսպես կոչված «ավելի քչով նույնը անելու» ծրագրեր: Էներգաարդյունավետությունը տարբերվում է «Պահանջարկի կողմի կառավարում» տերմինից այն իմաստով, որ վերջինս ծառայություն մատուցող ընկերության կողմից հովանավորվող և ֆինանսավորվող ծրագիր է, մինչդեռ «էներգաարդյունավետությունը» ավելի լայն հասկացություն է և չի սահմանափակվում ֆինանսավորման կամ հովանավորության մեկ աղբյուրով: «Էներգատնտեսումը» մեկ այլ՝ փոքր ինչ հնացած տերմին է, որը նույնպես օգտագործվում է, սակայն իր իմաստով ենթադրում է որևէ աշխատանքի կատարում առանց էներգիա ծախսելու, և ոչ թե նույն աշխատանքի կատարումը ավելի քիչ էներգիայով: Շատերն օգտագործում են այս տերմինները, որպես մեկը մյուսին փոխարինող:

57. **էներգիայի հավելյալ ծախս – *Incremental Energy Costs* –** Այսպես է կոչվում ամեն հաջորդ միավոր էներգիա արտադրելու կամ տեղափոխելու նպատակով կատարված այն հավելյալ ծախսը, որն ավելանում է առկա ծախսերի վրա:

58. **Էներգիայի վճար – *Energy Charge* –** Սա էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայության վճարն է, որը հիմնվում է սպառված կամ վճարման ենթակա էլեկտրական էներգիայի (կվտժ) վրա:

59. **Ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն – *Company Confidential Information* –** Լիցենզավորված անձի ֆինանսական վիճակի եւ առևտրային գաղտնիքների վերաբերյալ տեղեկատվությունը կամ այլ տեղեկություններ, որոնց հրապարակումը կարող է վնասել լիցենզավորված անձին, ինչպես նաեւ մասնավոր այն տեղեկությունները, որոնք վերաբերում են լիցենզավորված անձի կողմից մատակարարվող սպառողներին:

60. **Թաղում – *ENTOMB* –** Միջուկային կայանը շահագործումից դուրսբերման մեթոդ, որի դեպքում ռադիոկատիվ աղտոտիչները տեղավորվում են հատուկ կառույցի մեջ, օրինակ բետոնե կառույցում: Այդ կառույցը պահպանվում և սպասարկվում է պատշաճ կերպով, իսկ վերահսկողությունը շարունակվում է մինչև այն ժամանակ, երբ ռադիոակտիվ նյութերը տրոհվում են՝ հասնելով ռադիոնուկլիդների անսահմանափակ քանակով արտանետման:

61. **Լարում – *Voltage* –** Սա էլեկտրական պոտենցիալի տարբերությունն է երկու հաղորդիչների, կամ հաղորդչի ու հողի միջև: Չափման միավորն է վոլտ (կիլովոլտ): Կարևոր է այս միավորը չշփոթել վատտ-ի (կիլովատտի) հետ, որը արտահայտում է հզորությունը:

62. ***Լիցենզավորված անձ – Licensee –*** իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր, ինչպես նաեւ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքի հիմնարկ, որն օրենքով սահմանված կարգով ստացել է լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու լիցենզիա:

63. **Խտացված բնական գազ** – ***Compressed Natural Gas*** (CNG) **–** Սկզբնականորեն մեթանից բաղկացած բնական գազ, որը ճնշման ներքո խտացվում է մինչև ավելի քան 2400 մթն. և պահեստավորվում է բարձր ճնշման հատուկ կոնտեյներներում: Օրինակ, այն օգտագործվում է որպես բնական գազով աշխատող տրանսպորտային միջոցների վառելիք:

64. **Ծառայության արժեքի վրա հիմնված կարգավորում – *Cost-of-service Regulation* –** Կարգավորման ավանդական մոտեցում, որում էներգետիկ բնագավառի ձեռնարկություններին թույլատրվում է սահմանել այնպիսի սակագներ, որոնք թույլ են տալիս ծածկել սպառողներին ծառայություն մատուցելու հետ կապված բոլոր ծախսերը և ունենալ սահմանափակ շահույթ:

65. **Ծառայություն մատուցելու պարտականություն – *Obligation to Serve*** – Սա ծառայություն մատուցող ընկերության պարտավորությունն է մատակարարել էլեկտրաէներգիա բոլոր այն բաժանորդներին, ովքեր դրա կարիքը ունեն և ցանկանում են վճարել ծառայության համար սահմանված սակագինը: Ավանդաբար ընկերությունները համաձայնում են նման պարտավորություն ստանձնել, այն պայմանով, որ նրանց կտրվի բացառիկ մենաշնորհի հատուկ իրավունք:

66. **Ծառայություն մատուցող ընկերություն – *Utility*** – Կարգավորվող ձեռնարկություն է, որն ունի բնական մենաշնորհի բոլոր հատկանիշները: Էլեկտրաէներգետիկ արդյունաբերության վերակառուցման տեսանկյունից՝ «ծառայություն մատուցող ընկերություն» ասելով հասկանում ենք կարգավորվող, ուղղահայաց ինտեգրված էլեկտրաէներգետիկ ընկերություն: «Փոխադրման ծառայություն մատուցող ընկերություն» տերմինը վերաբերում է միայն փոխադրման համակարգի սեփականատիրոջը/շահագործողին: «Բաշխման ծառայություն մատուցող ընկերություն» տերմինը վերաբերում է միայն բաշխման համակարգի սեփականատիրոջը /շահագործողին, որը սպասարկում է վերջնասպառողին:

67. **Կայանի սեփական կարիքներ – *Generation Ancillary Needs*** – Արտադրող կայանի աշխատանքի համար անհրաժեշտ էլեկտրաէներգիա:

68. **Կառուցվածքի վերափոխում – *Restructuring*** – Այս տերմինն ունի բավականին լայն և ընդգրկուն իմաստ որը կարող է ներառել կազմակերպչական, տեխնիկական և կոմերցիոն կառուցվածքների վերափոխում, արդիականացում: Հայաստանում անցկացված կառուցվածքային վերափոխման արդյունքում իրարից անջատվել են համակարգի տարբեր գործառույթներն իրականացնող միավորները՝ դառնալով առանձին շահագործվող և տարբեր սեփականատերերին պատկանող ձեռնարկություններ:

69. **Կարգավորում – *Regulation*** – Սա պետական գործառույթ է, որով պետությունը կանոնակարգում և վերահսկվում է տվյալ ոլորտը՝ հիմք ընդունելով որոշակի քաղաքականություն նպատակներ և սկզբունքներ՝ օգտվելով օրինաստեղծ և այլ միջոցներից:

70. **Կենսազանգված – *Biomass*** – Կենսաբանական հիմք ունեցող օրգանական ոչ-հանածո նյութ, որը հանդիսանում է վերականգնվող էներգիայի աղբյուր:

71. **Կիլովատ (կՎ) – *Kilowatt* (*kW*)** – Հազար վատտ:

72. **Կիլովատ ժամ (կվտժ) – *Kilowatt Hour*** *(kWh)* **–** Այս չափման միավորով արտահայտվում է այն աշխատանքի քանակը, որ կատարել է էներգիան, եթե ընդունենք, որ մեկ ժամվա ընթացքում ծախսվել է 1 կիլովատ էներգիա:

73. **Կոմպակտ ֆլյուորեսցենտային (ցերեկային) լամպեր – *Compact Fluorescent Bulbs* –** Կոմպակտ ցերեկային լամպերը համատեղում են ֆլյուորեսցենտային լուսավորման արդյունավետությունը և սովորական լամպերի լուսավորության հարմարավետությունը:

74. **Կոնդենսատոր – *Condenser* –** Մեծ ծավալով ջերմափոխանակիչ, որը նախատեսված է մինչև եռացման կետը հովացնել տուրբինից դուրս եկող աշխատած շոգին՝ որպեսզի այն կարողանա ետ վերադառնալ դեպի ջերմության աղբյուրը՝ որպես ջուր: Ճնշումային ջրով աշխատող ռեակտորում ջուրը վերադառնում է շոգեգեներատորին: Եռացող ջրով աշխատող ռեակտորում, այն վերադառնում է դեպի ռեակտորի միջուկը/ակտիվ գոտի: Կոնդենսատորի միջոցով շոգուց հեռացված ջերմությունը փոխանցվում է շրջանառու (ցիրկուլյացիոն) ջրային համակարգ, որից հետո այն դուրս է գալիս մթնոլորտային մակերես՝ հովացնող աշտարակի կամ էլ ուղղակիորեն ջրի միջոցով:

75. **Համատեղ-արտադրող կայան – *Cogenerator*** – էլեկտրականություն և այլ տեսակի օգտակար ջերմային էներգիա արտադրող կայան, որն օգտագործվում է արդյունաբերական, առևտրային, ջեռուցման կամ հովացման նպատակներով:

76. **Համատեղ-արտադրություն – *Cogeneration* –** էլեկտրական և այլ տեսակի օգտակար էներգիայի (ինպես, օրինակ, շոգու կամ ջերմային էներգիայի) համատեղ արտադրություն է:

77. **Համակարգ** (գազի) **– *System*** *(gas)* **–** Խողովակների, փականների, չափիչ սարքերի, պահեստարանների և օժանդակ սարքավորումների միջկապակցված ցանց, որով կատարվում է բնական գազի տեղափոխումը, պահեստավորումն ու բաշխումը:

78. **Համակարգ** (էլեկտրական) **– *System*** *(electric)* **–** էլեկտրաէներգետիկայի ոլորտում համակարգ ասելով հասկանում ենք արտադրության, փոխադրման և բաշխման սարքավորումների այնպիսի ֆիզիկական միացություն, որոնք կառավարվում և շահագործվում են մեկ կենտրոնից՝ որպես ինտեգրված միավոր: Զուտ տեխնիկական տեսանկյունից էլեկտրաէներգետիկ համակարգը բաղկացած է արտադրությունից, փոխակերպումից, հաղորդումից և սպառումից:

79. Համակարգի ինտեգրում (նոր տեխնոլոգիաների իմաստով) – *System Integration* (*of new technologies*) – Այսպես է կոչվում էլեկտրաէներգետիկ համակարգում նոր տեխնոլոգիաների հաջողված ինտեգրումը, երբ վերլուծության են ենթարկվում այդ տեխնոլոգիայի օգտագործման արդյունավետությունը և գնահատվում են այն բացասական ազդեցությունները, որոնք կարող են ի հայտ գալ տվյալ տեխնոլոգիայի ավելի լայն կիրառության դեպքում:

80. Համակցված արտադրաեղանակ – *Combined Cycle* – էլեկտրական էներգիա արտադրելու տեխնոլոգիա, որում էլեկտրականությունն արտադրվում է, բոլոր այլ դեպքերում կորչող թափոնային ջերմությունից, որը դուրս է մղվում մեկ կամ մի քանի գազի այրման տուրբիններից: Դուրս եկող ջերմությունը մղվում է սովորական կաթսա կամ ջերմության վերականգնման շոգին արտադրող սարքավորումը, որը շոգու հիման վրա աշխատող տուրբինի միջոցով վերածվում է էլեկտրական էներգիայի:

81. Համակցված արտադրող կայան – *Combined Cycle Unit* – էլեկտրաէներգիա արտադրող կայան, որը բաղկացած է մեկ կամ մի քանի ներքին այրման տուրբիններից և նույնքան կաթսաներից, որոնց մատակարարվում է պահանջվող քանակությամբ էներգիա՝ ստացված ներքին այրման տուրբիններից արտանետվող գազից:

82. Համատեղ նշանակության շինություն (սարքավորում) տեղակայանք – *Joint-use Facility* – Մի քանի նպատակ ունեցող շինություն (սարքավորում) տեղակայանք, օրինակ, հիդրոէներգետիկայում այսպես են կոչվում այն ամբարտակները, որոնցով հավաքված ջուրը օգտագործվում է և հոսքը կարգավորելու և էլեկտրաէներգիա արտադրելու նպատակով:

83. Հանածո վառելիքներ – *Fossil Fuels* – Վառելանյութեր (ինչպիսիք են ածուխը, նավթը, բնական գազը) որոնք առաջացել են մի քանի միլիոն տարի առաջ գոյություն ունեցած բուսականության և կենդանի աշխարհի մնացորդների խտացման արդյունքում:

84. Հանրային ծառայություններ մատուցող ընկերություն – *Public Utility* – Սրանք այն ձեռնարկություններն են, որոնք մատուցում են այնպիսի անհրաժեշտ հանրային ծառայություններ, ինչպիսիք են էլեկտրական էներգիան, գազը, հեռախոսակապը, ջուրը՝ ղեկավարվելով օրենսդրությամբ սահմանված մենաշնորհային պայմաններով:

85. Հաշվարկային կենտրոն – *Settlements Center* – էլէկտրաէներգիայի մեծածախ շուկային հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ, որն իրականացնում է հաշվարկային համակարգի կազմակերպումը, այդ թվում՝

- Շուկայի մասնակիցներից հաշվառքի տվյալների ձեռքբերում/ընդունում,
- Արտադրող կայանի պատրաստականության մասին Համակարգի օպերատորից տեղեկատվության ստացում,
- Հաշվառման տվյալների հավաքագրում,
- Տվյալների հաստատում և, անհրաժեշտության դեպքում, Հիմնական տվյալների բազայում տվյալների ճշգրտում և փոխարինում,
- Վիճարկելի հարցերի դեպքում միջնորդի դերի կատարում,
- էլեկտրաէներգիայի իրացման ծավալների հաշվարկում,
- Գնման/վաճառքի հաշվետվությունների պատրաստում,
- Բարձրավոլտ էլեկտրական ցանցում նորմատիվ և փաստացի կորուստների հաշվարկում,
- Հաշվառման սարքերի տեղադրման ռեգիստրի վարում,
- Հաշվառքի տվյալների արխիվի վարում,
- Տվյալների հավաքագրման ավտոմատացման համակարգի ղեկավարում:

86. Հաշվառում – *Metering* – Առևտրային հաշվառման ավտոմատացված համակարգի միջոցով կամ հաշվարկային եղանակով էլեկտրաէներգիայի և հզորության հաշվառում:



87. Հասարակական հետաքրքրություն ներկայացնող խնդիրներ – *Public Interest Goals* – էլեկտրաէներգետիկ բնագավառում հասարակական հետաքրքրություն ներկայացնող խնդիրները հետևյալն են՝

I. Հորիզոնական հավասարություն՝ բոլորին դիտել որպես հավասար կողմեր

II. Հավասարակշռության հաստատում՝ կարճաժամկետ և երկարաժամկետ այն գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ արտադրական բալանսի վրա;

III. Պաշտպանություն մենաշնորհային դիրքի չարաշահումից;

IV. Պետության, ազգի և աշխարհի ընդհանուր պաշտպանություն հանուն առողջության և բարեկեցության:

88. Հաստատուն ծախս – *Fixed Cost* *(expense)* – Սրանք այն ծախսերն ու ծախքերն են, որոնք գործունեության ծավալի փոփոխվելուն զուգընթաց չեն փոխվում՝ մնում են նույնը:

89. **Հաստատուն շահագործման ծախսեր – *Fixed Operating Costs* –** Այս ծախսերն՝ ի տարբերություն, օրինակ, կապիտալ ներդրումների հետ կապված ծախսերի, չեն տատանվում շահագործումից կախված (օրինակ՝ պահպանման ծախսեր և աշխատողների վարձատրություն):

90. **Հավասարապես բաշխված ծախս – *Levelized cost* –** Այս տերմինով արտահայտվում է տնտեսական կյանքի ընթացքում արտադրող կայանի կառուցման և շահագործման ընդհանուր ծախսերի ներկա արժեքը՝ ներկայացված հավասար տարեկան մասհանումներով: Սովորաբար ծախսերը հավասարեցվում են իրական դրամով, օրինակ սղաճի ազդեցությունից խուսափելու համար:

91. **Հատուկ հաշիվ – *Special Account* –** Գնորդի կողմից Հայաստանի Հանրապետության առևտրային բանկում բացված հաշիվ, որի միջոցով Գնորդը կատարում է վճարումներ Վաճառողին և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց:

92. **Հեղուկացված բնական գազ – *Liquefied Natural Gas* *(LNG)* –** Սա բնական գազ է (մեթան), որը մթնոլորտային ճնշման ներքո հեղուկացվում է՝ իջեցնելով ջերմաստիճանը մինչև -162°C աստիճան:

93. **Հզորության /հզորություն ապահովելու/ վճար** – ***Capacity Charge*** – Սա Գնագոյացման երկդրույքային մեթոդի տարրերից է, որն օգտագործվում է հզորության հետ կապված գործառնություններում (օգտագործած էներգիայի համար վճարը այդ համակարգի մյուս տարրն է): Հզորության վճարը հզորության որոշակի մակարդակի վրա անխափան և կայուն աշխատանք ապահովելու համար մատակարարի պատրաստականության (տես նաև պատրաստականություն) համար տրվող վճարն է:

94. **Հզորության և էլեկտրաէներգիայի հաշվեկշիռ – *Energy and Capacity Balance*** – Այս տերմինով բնութագրվում է էլեկտրաէներգիայի արտադրությանն ու սպառմանը բնորոշ այն հատկությունը, համաձայն որի էլեկտրաէներգիայի արտադրությունը և սպառումը տվյալ պահին պետք է լինեն միմյանց հավասար:

95. **Հզորություն – *Capacity* –** Էներգետիկայում այս տերմինով բնութագրվում է յուրաքանչյուր պահի դրությամբ մատակարարվող, հաղորդվող և սպառվող էներգիան՝ արտահայտված Մեգավատտով:

96. **Հիմնական միջոցների արժեք – *Capital Cost* –** Կայանքի և սարքավորումների տեղադրման և դրանց համար հատկացված տարածքի կառուցապատման համար նախատեսված ծախսեր:

97. Հողմային էլեկտրակայան – *Wind Power Plant* – Տրանսֆորմատորների, բաշխիչ գծերի և մեկ ենթակայանի միջոցով ընդհանուր համակարգին միջկապակցված հողմային տուրբինների խումբ է: Նման կայանների շահագործման, վերահսկման և պահպանման ֆունկցիաները սովորաբար կենտրոնացված են համակարգչային մոնիթորինգային համակարգում, որին ավելանում են նաև տեսողական հսկումներ:



98. Հողմային տուրբին – *Wind Turbine* – Քամու էներգիան փոխակերպող սարքավորում, որն արտադրում է էլեկտրաէներգիա: Սովորաբար սյան վրա գտնվող հորիզոնական առանցքի շուրջ պտտվում է երեք թիակ:

99. Հոսանքահաղորդման կետ – *Power Exchange Point* – Միջհամակարգային էլեկտրահաղորդման գծի կետ, որտեղ իրականացվում է էլեկտրաէներգիայի արտահոսքը և ներհոսքը:

100. Հովացնող աշտարակ – *Cooling Tower* – Ջերմափոխանակիչ, որը նախատեսված է օժանդակելու ջրի հովացմանը, որն օգտագործվում է հովացնելու էլեկտրակայանի տուրբինից դուսր եկող աշխատած շոգին: Հովացնող աշտարակները աշխատած շոգին փոխանցում են ոչ թե ջրային մակերևույթ այլ փոխանցում են օդ:

101. Հում նավթ – *Crude Oil* – Հիդրոկարբոնատների խառնուրդ, որը հեղուկ վիճակում գտնվում է ստորգետնյա բնական պահեստարաններում և պահպանում է հեղուկ վիճակը նաև մթնոլորտային ճնշման տակ՝ երկրագնդի մակերեսը տարանջատող սարքավորումների միջով անցնելուց հետո: Հում նավթը մշակվում է բազմատեսակ նավթամթերքներ ստանալու նպատակով, որոնց թվում են ջերմարձակող նյութերը, բենզինը, դիզելային վառելիքը և սև նավթամթերքը, քսուքային նյութերը, ասֆալտը, էթանը, պրոպանը, բութանը և բազմաթիվ այլ նյութեր որոնք կիրառվում են իրենց էներգետիկ կամ քիմիական բաղադրիչների օգտակարության շնորհիվ:

102. Հուսալիություն – *Reliability* – Էլեկտրական համակարգի հուսալիությունն ունի երկու բաղադրիչ՝ համապատասխանություն և անվտանգություն: Համապատասխանությունը էլեկտրական համակարգի ունակությունն է ցանկացած պահի ապահովելու էլեկտրաէներգիայի ընդհանուր պահանջարկը և էներգիայի պահանջնե-

ը՝ հաշվի առնելով էլեկտրական հզորությունների պլանային և արտապլանային դուրս բերումն աշխատանքային վիճակից: Անվտանգությունը էլեկտրաէներգետիկ համակարգի ունակությունն է դիմակայելու հանկարծակի այնպիսի ընդհատումներին, ինչպիսիք են կարճ միացումները, կամ համակարգի հզորությունների անսպասելի կորուստը:

103. Ճառագայթային հիվանդություն (սինդրոմ) – *Radiation Sickness (syndrome)* – Ախտանշանների ամբողջություն. բնութագրում է այնպիսի հիվանդություն, որը հայտնի է որպես ճառագայթում անունով: Առաջանում է մարմնի կամ դրա մեծ մասի վրա իոնացված ճառագայթման առավել բարձր աստիճանի (200-ից ավելի բարձր ճառագայթում կամ 2 ճառագայթ) ենթարկվածության հետևանքով: Հիվանդության սկզբնական ախտանշաններ են սրտխառնոցը, թուլությունը, փսխումը և փորլուծությունը, որոնց կարող է հետևել մազաթափությունը, արյունահոսությունը, բերանի խոռոչի և կոկորդի բորբոքումը, էներգիայի ընդհանուր կորուստը: Որոշ դեպքերում, երբ ճառագայթվածությունը հասնում է մոտավորապես 1000 ճառագայթում (10 ճառագայթ) կամ ավելին, այն կարող է հանգեցնել մահացու վախճանի երկուսից չորս շաբաթվա ընթացքում: Նրանք, որոնց հաջողվում է ամբողջ մարմնի վրա ճառագայթման մեծ դոզա ստանալուց հետո ապրել վեց շաբաթ, կարող են վերականգնվել:

104. Ճառագայթման զգուշացնող նշան – *Radiation Warning Symbol* – Պետականորեն սահմանված նշան. կարմիր անիլինի ներկ կամ սև երեքնուկ դեղին ֆոնի վրա: Նշվածը կիրառվում է այն ժամանակ, երբ առկա է ռադիոակտիվ նյութերի որոշ քանակություն կամ, երբ տարածքը ճառագայթված է:

105. Ճնշման տակ աշխատող ջրային ռեակտոր – *Pressurized Water Reactor (PWR)* – Էներգետիկ միջուկային ռեակտոր, որտեղ ջերմությունը ռեակտորի միջուկից փոխանցվում է ջերմափոխանակչին բարձր ջերմաստիճանի ջրի միջոցով, որը պահպանվում է հիմնական համակարգում բարձր ճնշման տակ: Շոգին արտադրվում է երկրորդական շղթայում: Ռեակտորներից շատերը, որոնք արտադրում են էլեկտրական էներգիա համարվում են ճնշման տակ աշխատող ջրային ռեակատորներ:

106. Մանրածախ շուկա – *Retail Market* – Սա այն շուկան է, որտեղ էլեկտրաէներգիան և այլ էներգետիկ ծառայությունները վաճառվում են ուղիղ վերջնական սպառողներին:

107. Մասնատում – *Disaggregation* – Ուղղահայաց ինտեգրված էներգետիկ ընկերության մասնատում ավելի փոքր և անհատապես տնօրինվող գործարար միավորների (օրինակ՝ արտադրություն, դիսպեչերական կարգավարում, փոխադրում, հաշվարկների իրականացում, բաշխում): Որոշ դեպքերում "ապաինտեգրացում" "ինտեգրման վերացում" և "շերտավորման վերացում" տերմինները օգտագործվում են նույն հասկացությունը բնութագրելու նպատակով (տես նաև «վաճառքի միջոցով օտարում» տերմինի բացատրությունը):

108. Մեգավատտ – *Megawatt* (*MW*) – Մեկ միլիոն վատտ:

109. Մեծաքանակ էլեկտրական էներգիայի մատակարարում – *Bulk Power Supply* – Շատ հաճախ այս տերմինն օգտագործվում է մեծածախ էլեկտրաէներգիայի մատակարումը բնութագրելու համար: Ավելի լայն իմաստով՝ այս հասկացությունը վերաբերում է արտադրող կայաններին, հաղորդալարերին և դրանց հետ կապված սարքավորումներին, որպես մեկ ամբողջություն: Սակայն նեղ իմաստով այս տերմինն օգտագործվում է այն սարքավորումներն ու միջոցները նկարագրելիս, որոնք պատկանում են մեկ ընկերության, կամ մի քանի այնպիսի ընկերությունների, որոնց հաղորդրման գծերը փոխկապակցված են:

110. Մենաշնորհ – *Monopoly* – Մեկ վաճառող, որը վերահսկում է շուկայի ողջ վաճառքը:

111. Միացման պահանջներ – *Connection Terms* (*Agreement*) – Տեխնիկական և տնտեսական համաձայնությունների և իրավական հարաբերությունների այն ամբողջությունը, որը տնտեսական գործունեություն իրականացնելու նպատակող հնարավորություն և իրավունք է տալիս սպառողին Ազգային Ցանցին /Արտադրող կայաններ, Բարձրավոլտ և Բաշխիչ Ցանցեր/ միանալու համար, գործում է համաձայն Ցանցային օրենսգրքի և ՀՀ գործող օրենքներին:

112. Միջինացված ծախսեր – ***Average Cost* –** Ծառայություն մատուցող ընկերությանն անհրաժեշտ հասույթը՝ բաժանած վաճառքին: Միջինացված ծախսերի մեջ են մտնում առկա արտադրող կայանների ծախսերը, տեղափոխող և բաշխող գծերի սպասարկման ծախսերը, ինչպես նաև ծախսեր այլ սարքավորումների համար, որոնք անհրաժեշտ են բաժանորդներին սպասարկելու համար: Այս ծախսերի թվին են դասվում նաև շահագործման և պահպանման, հարկային վճարումների ու վառելիքի հետ կապված ծախսերը:

113. Միջհամակարգային կապ – *Interconnection* – Ընդհանուր փոխադրման գիծ երկու կամ ավել համակարգերի միջև, որը հնարա-

վոր է դարձնում նրանց միջև էներգիայի հոսքը: Փոխադրող հզորությունների ֆիզիկական միացումն օգտագործվում է էներգիա վաճառելու կամ փոխանակելու նպատակով:

114. Միջուկ – *Core* – Միջուկային ռեակտորի ակտիվ գոտի, որտեղ պարունակվում են վառելիքային էլեմենտներ, դանդաղացուցիչ, նեյտրոններ և աջակցող կառույցներ:

115. Միջուկային ճառագայթում – *Radiation* (*nuclear*) – Ռադիոակտիվ տրոհման արդյունքում, ոչ կայուն ռադիոակտիվ ատոմների միջուկից բաց թողնված մասնկիներ (ալֆա, բետտա, նեյտրոններ) կամ ֆոտոններ (գամմա):

116. Միջուկային սինթեզի ռեակցիա – *Fusion Reaction* – Ռեակցիա, որի ընթացքում առնվազն մեկ ծանր, ավելի կայուն միջուկ ստեղծվում է երկու թեթև, ավելի քիչ կայուն միջուկներից: Նման ռեակցիաների ընթացքում առաջանում է էներգիայի հսկայական արձակում, ինչպես օրինակ աստղերից արձակվող էներգիան:

117. Մոնոփսոնիա – *Monopsony* – Մեկ գնորդ, որը վերահսկում է շուկայի ողջ գնումը:

118. Մուտքի-ելքի իրավունք – *Right-of-way* – Այս տերմինը վերաբերում է էլեկտրաէներգիան փոխադրող գծի տակ գտնվող հողակտորին և այն օգտագործելու ու սպասարկելու իրավունքին: Սովորաբար նման հողակտորի լայնությունը կախված է փոխադրման գծի հզորությունից (կիլովոլտից):

119. Նախագծի տեխնիկա-տնտեսական հիմնավորում – *Feasibility Study* – Ցանկացած տեխնիկական նախագծի նախնական և սկզբնական ուսումնասիրությունների փաթեթը, որը պարզաբանում և գնահատում է դրա տեխնիկական և տնտեսական պիտանիելության չափը:

120. Ներդրողին պատկանող էներգետիկ ընկերություն – *Investor Owned Utility* (*IOU*) – Սրանք հանրային ծառայություններ մատուցող այն ընկերություններն են, որոնց սեփականատեր են հանդիսանում շահույթ ակնկալող բաժնետերերը: Այս տերմինը սովորաբար օգտագործվում է նման ընկերությունները քաղաքային և այլ իշխանությունների պատկանող և դրանց կողմից շահագործվող ընկերություններից տարբերելու համար:

121. Նվազագույն ծախսումներով պլանավորում – *Least Cost Planning* – Համապարփակ /տնտեսական, ֆինանսական, տեխնիկական/ ու-

սումնասիրություն, որը տալիս է որոշակի ժամանակահատվածի համար /սովորաբար 10-15 տարի/ բազմանպատակ գնահատումներ էներգահամակարգի նվազագույն և արդյունավետ ծախսերով պլանավորման վերաբերյալ սկզբունքները և անհրաժեշտ հեռանկարային տեխնիկատնտեսական ռազմավարությունը:

122. Շահույթի դրույքաչափ կամ հատույցադրույք – *Rate of Return* – Ծառայություն մատուցող ընկերության շահագործումից ստացվող զուտ եկամտի գործակից, որը հաշվարկվում է որպես սակագնի բազայի որոշակի տոկոսադրույք:

123. Շոգետուրբին – *Steam Turbine* – Այս սարքի օգնությամբ կաթսայում արտադրված բարձր ճնշմամբ մղված շոգին վերածվում է մեխանիկական էներգիայի, որն այնուհետև կարող է օգտագործվել գեներատորը պտտեցնելու և էլեկտրաէներգիա ստանալու նպատակով:



124. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում – *Environmental Impact Assessment* (*EIA*) – Այս վերնագիրը կրող զեկույցներում զետեղված է այնպիսի տեղեկատվություն, որը պահանջվում է որևէ նախագիծ իրագործելիս շրջակա միջավայրի վրա ազդեցությունը գնահատելու համար: Այն տեղեկացնում է նաև որոշում կայացնողներին և հանրությանը այնպիսի խելամիտ այլընտրանքների մասին, որոնց շնորհիվ հնարավոր է խուսափել կամ նվազեցնել անբարենպաստ ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և բարձրացնել դրա մաքրությունը:

125. Շուկայի կանոններ – *Market Rules* – Կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված հիմնարար փաստաթուղթ, որով կանոնակարգվում են էլեկտրաէներգետիկական համակարգում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց փոխհարաբերությունները, համակարգի հուսալիության եւ անվտանգության հետ առնչվող հիմնական կանոններն ու ցուցանիշները, ինչպես նաև դրանց և շուկայի բնականոն աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմները:

126. Ոչ պիկային սպառում – *Off Peak* – Սա այն ժամանակահատվածն է, երբ համակարգում պահանջարկը համեմատաբար ցածր է: Նման ժամանակահատվածներն առաջանում են օրական, շաբաթական և սեզոնային կտրվածքով, տարբեր էլեկտրաէներգետիկ համակարգերի համար տարբեր են լինում:

127. **Չափիչ Համալիր – *Metering Complex* –** էլեկտրաէներգիայի հաշվիչի, հոսանքի և լարման տրանսֆորմատորների համախումբ:

128. **Պահանջարկի կողմի կառավարում – *Demand Side Management* (*DSM*)** – էներգետիկ ընկերությունների կողմից ֆինանսավորվող այնպիսի ծրագրերի պլանավորում, իրագործում և գնահատում, որոնց նպատակն է ներգործել սպառողների կողմից օգտագործվող էներգիայի քանակի և ժամանակի վրա:

129. **Պահանջվող հասույթ – *Revenue Requirement* –** Սա ընդհանուր հասույթն է, որը ստանալու հնարավորությունը տրված է էներգետիկ ընկերությանը և որը ներառում է շահագործման հետ կապված ծախսերն ու սակագնի բազայի վրա հաշվարկվող խելամիտ շահույթը:

130. **Պահուստային արտադրական հզորություն – *Reserve Generating Capacity* –** Սա էներգիա արտադրելու հզորության այն քանակն է, որը կարող է գործի դրվել պիկային կամ սովորականից բարձր պահանջարկը բավարարելու, ինչպես նաև պլանային կամ արտապլանային անջատումների ժամանակ էլէկտրաէներգիա արտադրելու համար:

131. **Պահուստային մարժա** (շահագործման իմաստով) **– *Reserve Margin*** *(operating)* – Սա պիկային բեռի պայմաններում առկա, սակայն չօգտագործված հզորության քանակն է, որն արտահայտված է տոկոսներով՝ ընդհանուր հզորության նկատմամբ:

132. **Պատրաստականություն – *Availability* –** Կատարողի հաղորդման էլեկտրական ցանցի (դրա առանձին հանգույցների, գծերի, ենթակայանների) աշխատանքային պատրաստ վիճակը՝ էլեկտրաէներգիան հաղորդել հուսալիության պայմանագրային ցուցանիշների ապահովմամբ, պայմանագրում նշված հզորության սահմաններում:

133. **Պիկային բեռ կամ պիկային պահանջարկ – *Peak Load or Peak Demand*** – Սա այն էլեկտրական բեռն է, որը համապատասխանում է ժամանակի որոշակի հատվածում էլեկտրաէներգիայի առավելագույն պահանջարկին:

134. **Պիկային հզորություն – *Peaking Capacity* –** Սա արտադրող սարքավորումների այն հզորությունն է, որը նախատեսված է օրական, շաբաթական կամ սեզոնային ամենամեծ բեռը սպասարկելու համար: Պիկային հզորությունը սպասարկելու նպատակով, որոշ հզորություններ կարող են շահագործվել միայն որոշակի պահերի:

135. Ջերմոցային գազեր – *Greenhouse Gases* – Սրանք այն գազերն են, որոնք երկրագնդի մթնոլորտի շերտում են պահում արևի ջերմությունը՝ առաջացնելով «ջերմոցային էֆեկտ»: Այս գազերը երկու հիմնական տարատեսակներն են ջրի գոլորշին և ածխաթթու գազը: Ավելի սակավ ջերմոցային գազերի թվին են պատկանում մեթանը, օզոնը և ազոտային օքսիդները:

136. Ջերմոցային էֆֆեկտ – *Greenhouse Effect* – Սա երկրագնդի մթնոլորտի հետ կատարվող երևույթ է, երբ որոշակի գազերի արտանետման հետևանքով արևի ջերմությունը պահվում է մթնոլորտային շերտում: Ասում են, որ այս դեպքում երկրագնդի մթնոլորտը ջերմոցի դեր է կատարում:

137. Ջերմության տեսակարար ծախս – *Heat Rate* – Սա արտադրող կայանների ջերմային արդյունավետության չափման միավոր է, որը հիմնականում արտահայտվում է Btu-ով (Բրիտանական ջերմային միավոր; 1 Btu = 0.00029 կվտժ) յուրաքանչյուր զուտ կվտժ-ի համար: Այս ցուցանիշը հաշվարկելու համար էլեկտրաէներգիայի արտադրության համար օգտագործված վառելանյութի ջերմության տեսակարար ծախսը բաժանում են արդյունքում ստացված զուտ կվտժ էլեկտրաէներգիայի վրա:

138. ՋՋԷՌ (ջրաջրային էլեկտրական ռեակտոր) – *VVER* – ՋՋԷՌ-ը համարվում է ճնշման տակ ջրով աշխատող ռեակտորի ռուսական տարբերակը: Գոյություն ունի ՋՋԷՌ-ի երեք նախագիծ՝ երկու 6 հանգույցային – 440 ՄՎտ [440-230(հին սերնդի) և 440-213 Մվտ (նոր սերնդի)] և 4 հանգույցային – 1000 ՄՎտ: Ճնշման տակ աշխատող ռեակտորների վերալիցքավորումն իրականացվում է կայանի փակմանը զուգահեռ:

139. Ռադիոակտիվ աղտոտում – *Radioactive Contamination* – Ռադիոակտիվ նյութերի թաղում այնպիսի վայրերում, որի արդյունքում կարող է վնաս հասցվել մարդկային կյանքին կամ սարքավորմանը:

140. Ռադիոակտիվ թափոններ – *Waste (radioactive)* – Միջուկային կայանի գործունեությունից առաջացած կարծր, հեղուկ և գազեր պարունակող նյութեր, որոնք համարվում են ռադիոակտիվ կամ դառնում են ռադիոակտիվ և, որոնց համար ապագա օգտագործում չի նախատեսվում: Սովորաբար թափոնները դասակարգվում են որպես բարձր (ռադիոակտիվության կուտակում, որը մեկ ոտնաչափ տարածքի վրա հասնում է հարյուր հազարավոր կյուրիների), ցածր

(մեկ ոտնաչափ տարածքի վրա մինչև 1 միկրոկյուրի ռադիոակտիվություն) կամ միջին (գտնվում է վերը նշված երկու ծայրահեղությունների մեջտեղում) ակտիվության թափոնների:

141. Ռադիոակտիվ նյութերի տրոհում – *Decay* (*radioactive*) – Ժամանակի ընթացքում, ալֆա կամ բետտա մասնիկների ատոմային միջուկից հանկարծակի ճառագայթման հետևանքով, ցանկացած ռադիոակտիվ նյութի քանակի նվազում, որը հաճախ ուղեկցվում է գամմա ճառագայթմամբ:

142. Ռադիոակտիվություն – *Radioactivity* – Ոչ կայուն իզոտոպի, սովորաբար ալֆա կամ բետտա մասնիկների միջուկից ճառագայթման հանկարծակի արտանետում, որը հաճախ ուղեկցվում է գամմա ճառագայթմամբ: Վերաբերում է նաև ճառագայթման նորմային: Չափվում է մեկ վայրկյանում բեկերելով (ռադիոակտիվ նյութում նուկլիդների ակտիվության միավոր) կամ ռադիոակտիվ տրոհմամբ:

143. Ռադիոլոգիական հետազոտություն – *Radiological Survey* – Ճառագայթման վտանգի գնահատում, որն ուղեկցվում է ռադիոկատիվ նյութերի արտադրությամբ, օգտագործմամբ կամ առկայությամբ, որոշակի պայմանների ներքո: Նման գնահատումը սովորաբար ներառում է ռադիոկատիվ նյութերի և սարքավորումների թաղման ֆիզիկական հետազոտում, ճառագայթման մակարդակի չափումներ կամ գնահատումներ, վերամշակման վերաբերյալ բավարար գիտելիք՝ կանխատեսելու ռադիոակտիվ նյութերի կամ սարքավորումների ակնկալվող կամ հնարավոր փոփոխություններից առաջացող վտանգները:

144. Ռեակտորի իրան – *Reactor Vessel* – Գլանաձև պողպատե իրան, որը ներառում է ռեակտորի միջուկը, կարգավորող ձողերը, ջերմակիրը և միջուկը պահող կառույցները:

145. Ռեակտորի ջերմակիր համակարգ – *Reactor Coolant System* – Համակարգ, որը էներգիան հեռացնում է ռեակտորի ակտիվ գոտուց՝ուղղակիորեն կամ անուղղակիորեն ուղղելով այն դեպի շոգետուրբին:

146. Ռենտգեն (*R*) – *Roentgen* (*R*) – Իոնացված ճառագայթման ենթարկվածության միավոր: Այն համարվում է գամմայի կամ ռենտգենյան ճառագայթների քանակ, որի առկայության դեպքում ստեղծվում են իոններ՝ ստանդարտ պայմանների ներքո օդում առաջացնելով 0.000258 կուլոն/ կգ-ի լիցք: Անվանվել է գերմանացի գիտնական

Վիլհելմ Ռենտգենի անունով, որը 1895 թվականին հայտնաբերել է ռենտգենյան ճառագայթները:

147. Ռենտգենյան ճառագայթներ – *X-rays* – Ներթափանցող էլեկտրամագնիսական ճառագայթում (ֆոտոն), որի ալիքի երկարությունը ավելի կարճ է քան տեսանելի լույսինը: Այս ճառագայթները սովորաբար առաջանում են որոշակի միջուկների շուրջը՝ էլեկտրոնային դաշտի գրգռման արդյունքում: Միջուկային ռեակցիաները սովորաբար տեղի են ունենում ֆոտոնների հետ, որոնք առաջանում են միջուկներում, որպես ռենտգենյան ճառագայթներ:

148. Ռեսուրսի արդյունավետություն – *Resource Efficiency* – Այսպես է նկարագրվում նույն քանակությամբ ապրանք կամ ծառայություն արտադրելու համար ավելի քիչ ռեսուրսներ օգտագործելու գաղափարը: Ռեսուրսների արդյունավետությունը վերաբերում է ոչ միայն էներգիային, այլև բոլոր ֆիզիկական ռեսուրսներին և նյութերին, որոնք օգտագործվում են ապրանքների ու ծառայությունների արտադրության և օգտագործման ցիկլում:

149. ՌԿՀ (ռենտգենի կենսաբանական համարժեք) **– *REM*** *(Roentgen equivalent man)* **–** ստանդարտ միավոր, որը չափում է մարդկանց վրա իոնացված ճառագայթման ազդեցությունը:

150. Սակագին – *Tariff* – էլեկտրական էներգիայի եւ (կամ) հզորության, ջերմային էներգիայի եւ բնական գազի միավորի վաճառքի, էներգետիկայի բնագավառում լիցենզավորված գործունեությամբ մատուցվող ծառայությունների համար կարգավորող մարմնի կողմից սահմանված գին:

151. Սակագնային բազա – *Rate Base* – Սա սեփական միջոցների այն արժեքն է, որի վրա հիմնվելով՝ ծառայություն մատուցող ընկերությանը թույլատրվում է ստանալ շահույթ, որը հաստատված է կարգավորող մարմնի կողմից: Սակագնային բազան փաստորեն ներկայացնում է ընկերության այն սեփական միջոցների արժեքը, որոնք օգտագործվում են ծառայություն մատուցելու համար, և կարող է հաշվարկվել հաշվապահական մեթոդների ցանկացած համադրությամբ՝ (ընթացիկ գներով արտահայտված արժեք, հաշվարկված ներդրումներ, վերականգնման ծախսեր կամ սկզբնական արժեք): Կախված նրանից, թե ինչ մեթոդ է օգտագործվել սակագնային բազան կարող է ներառել կանխիկ գումարներ, աշխատանքային կապիտալ, նյութեր և սարքավորումներ, մաշվածքի հետ կապված մասհանումներ; կառուցման համար կատարված ներդրումներ; սպառողների կանխավճարներ կառուցման համար; տարբեր հարկատեսակներ:

152. Սակագնի ուսումնասիրություն – *Rate Case* – Այսպես են կոչվում կարգավորող հանձնաժողովում անցկացվող այն վարույթները, որոնցում քննարկվում են հանրային ծառայությունների համար գանձվող սակագները:

153. Սահմանազատման կետ – *Separation Point* – Լիցենզավորված անձանց էլեկտրակայանքների հաշվեկշռային պատկանելության սահման:

154. Սահմանային ծախս – *Marginal Cost* – Ծառայություն մատուցող ընկերությունների ենթատեքստում՝ սա այն ծախսն է, որը պետք է կատարի ընկերությունը յուրաքանչյուր հաջորդ կվտժ էլեկտրաէներգիան մատակարարելու համար, անկախ անխուսափելի ծախսերից:

155. Սահմանափակ թողունակությամբ անցման կետ – *Bottleneck* – Սա էլեկտրաէներգիա փոխադրող կամ բաշխող համակարգի այն կետն է (օրինակ էլեկտրական էներգիայի հաղորդման կամ փոխակերպման սարք/սարքավորում) որի սահմանափակ թողունակությունը խոչնդոտ է հանդիսանում այդ համակարգի նորմալ կամ առավել արդյունավետ աշխատանքի համար: Օրինակ եթե գոյություն ունի կայան 300 Մվտ հզորությամբ և համապատասխան սպառում, ապա նրանց միջև 100 Մվտ թողունակությամբ հաղորդալարը դառնում է սահմանափակ թողունակությամբ անցման կետ:

156. Սպառող – *Consumer* – էլեկտրական էներգիայի (հզորության), բնական գազի եւ (կամ) ջերմային էներգիայի սպառման պահանջարկ ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն, որն էներգիայի մատակարարման պայմանագիր է կնքել լիցենզավորված անձի հետ:

157. Սպասարկման առկա դրական փորձ – *Good Utility Practice* – Սրանք այն նորմերն են, մեթոդներն ու առկա դրական փորձն է, որին ձգտում են հասնել ցանկալի արդյունքներ ստանալու համար, այսինքն՝ նվազագույն խելամիտ ծախսեր, որոնց համապատասխանեցված են բիզնեսի, հուսալիության, անվտանգության և օպերատիվության լավագույն նորմերը: Սպասարկման առկա դրական փորձը, պարտադիր չէ որ սահմանափակվի ամենաբարենպաստ փորձով, մեթոդներով և նորմերով՝ բացառելով բոլոր այլ նորմերը: Դրանք ավելի շատ վերաբերում են այն ամենին, ինչն ընդունելի է տվյալ տարածաշրջանում:

158. Սպոտային (կետային) գնումներ – *Spot Purchases* – Սա վառելանյութի որոշակի քանակի կամ քանակների միանգամյա առաքումն է, որը գնված է մեկ տարվա ընթացքում առաքելու պայմանով: Սպոտային գնումներ կատարողները ունեն մի քանի նպատակ՝ ապահովել որոշակի քանակությամբ էներգիայի արտադրություն, բավարարել անսպասելի պահանջները կամ օգտագործել որոշակի պահին վառելանյութը ցածր գներով գնելու հնարավորությունը:

159. Ստացման կետ(եր) – *Point(s) of Receipt* – Սրանք միջանցիկ այն կետերն են, որոնք գտնվում են փոխադրման ծառայություն մատուցողի համակարգում, որտեղից էլեկտրաէներգիա սպառող կողմը կարող է օգտվել հզորությունից և/կամ էներգիայից:

160. Վառելանյութի ցիկլ – *Fuel Cycle* – Վառելանյութը օգտակար դարձնելու հաջորդական պրոցեսների և փուլերի ամբողջություն, որը ներառում է արդյունահանումը, փոխակերպումը, փոխադրումը և այրումը: Սովորաբար այս փուլերից յուրաքանչյուրն ուղեկցվում է որոշակի նյութերի արտանետմամբ դեպի մթնոլորտային շերտ:

161. Վառելիքային խողովակ – *Fuel Rod* – Երկար, նեղ խողովակ, որը միջուկային վառելիքը (վառելիքը) պահպանում է միջուկային ռեակտորում օգտագործման համար: Վառելիքային խողովակները տեղակայված են հանգույցներով, որոնց կոչում են վառելիքային տարրեր կամ վառելիքային հավաքվածքներ, որոնք առանձին-առանձին փոխանցվում են ռեակտորի ակտիվ գոտի:

162. Վառելիքի վերամշակում – *Fuel Reprocessing* – Ռեակտորի վառելիքի վերամշակում՝ չօգտագործված միջուկային վառելիքը թափոնից անջատելու համար:

163. Վարակազերծում – *Decontamination* – Կառույցներից, տարածքից կամ մարդուց աղտոտված ռադիոակտիվ նյութի նվազեցում կամ հեռացում: Վարակազերծումը կարող է համալրվել հետևյալ գործողություններով. 1) մակերեսի մշակում՝ աղտոտումը հեռացնելու կամ նվազեցնելու համար, 2) նյութի անձեռնմխելիություն՝ ռադիոակտիվ նյութերի բնական տրոհման արդյունքում՝ ռադիոկատիվության նվազեցում, կամ 3) աղտոտիչ նյութերի ծածկում՝ արտանետված ճառագայթումից պաշտպանելու կամ այն թուլացնելու համար:

164. Վարվեցողության կանոններ – *Rules of Conduct* – հանձնաժողովի անդամների եւ աշխատակազմի, հանձնաժողովի անդամների, աշխատակազմի եւ էներգետիկայի բնագավառի լիցենզավորված

անձանց, ինչպես նաեւ աշխատակազմի եւ սպառողների միջեւ վարվեցողության կանոններ՝ հաստատված հանձնաժողովի կողմից:

165. Վերականգնվող ռեսուրսներ – *Renewable Resources* – Էներգիայի վերականգնվող ռեսուրսները բնականորեն վերարտադրվող են, բայց և սահմանափակ: Ըստ էության դրանք չեն վերջանում ժամանակի ընթացքում, բայց յուրաքանչյուր պահի դրությամբ քանակապես սահմանափակ են: Վերականգնվող էներգիայի աղբյուրներին են պատկանում կենսազանգվածները, հիդրոէներգիան, գեոթերմալ, արևային և հողմային էներգիաները: Էներգետիկ համակարգերում վերականգվող ռեսուրսները կիրառվում են մեծաքանակ էլեկտրաէներգիայի արտադրության, բաշխված էլեկտրաէներգիայի արտադրության, առանց ընդհանուր համակարգին միանալու արտադրության և պահանջարկի կրճատման (էներգաարդյունավետության) տեխնոլոգիաներում:

166. Վերակարգավորում – *Reregulation* – Կարգավորող համակարգի մշակում և իրագործում այն ձեռնարկությունների համար, որոնք կազմավորվել են ուղղահայաց ինտեգրված էլեկտրաէներգետիկ համակարգի կառուցվածքային վերափոխման արդյունքում: Խոսքն այն էներգետիկ ձեռնարկությունների մասին է, որոնք շարունակում են պահպանել իրենց բնական մենաշնորհային դիրքը, ուր շուկայի անկատարությունը հնարավորություն չի տալիս մրցակցության զարգացման համար, և որտեղ, հաշվի առնելով որոշակի քաղաքական նրբություններ, մրցակցության արդյունքներն անբավարար են մի շարք նկատառումներով: Վերակարգավորումը կարող է կիրառել կարգավորման նույն սկզբունքները, որոնք կիրառվում էին կառուցվածքային վերափոխումից առաջ, կամ առաջնորդվել այլ սկզբունքներով:

167. Վերամշակում – *Recycling* – Իրենց օգտակարությունը կորցրած նյութերի փոխակերպման գործընթաց, որից ստացվում են նոր արտադրանքներ:

168. Վթարային անջատում – *Forced Outage* – Այս տերմինով բնութագրվում է արտադրող կայանի, փոխադրող գծի կամ այլ սարքավորման անջատումը վթարի պատճառով կամ այնպիսի պայմաններում, երբ արտադրող կայանում որևէ սարքավորում անսպասելիորեն շարքից դուրս է գալիս, ինչի հետևանքով կայանը չի կարողանում ապահովել համապատասխան բեռը:

169. Տարանցիկ փոխադրման ծառայություն – *Wheeling Service* – Երկու համակարգերի արանքում գտնվող և նրանց միջև էլեկտրաէներգիան տեղափոխելու հնարավորություն ունեցող փոխադրման համակարգի մատուցած ծառայությունն է: Տարանցիկ փոխադրման պայմանագրերը կարող են կնքվել երկու և ավելի համակարգերի միջև:

170. Տարանցիկ փոխադրության վճար – *Wheeling Charge* – Սա այն գումարն է, որը գանձվում է էլեկտրաէներգետիկ համակարգի կողմից, մեկ այլ համակարգից և/կամ դրա համար էլեկտրաէներգիա տեղափոխելու համար:

171. Տարանջատում – *Unbundling* – Էլեկտրաէներգետիկ համակարգի տարանջատումն է հիմնական բաղադրիչների, որից հետո դրանցից յուրաքանչյուրը հանվում է վաճառքի: Օրինակ, արտադրող կայանները, փոխադրման համակարգը և բաշխման համակարգը կարող են առանձնացվել իրարից և առաջարկվել որպես առանձին ծառայություններ:

172. Տնտեսական արդյունավետություն – *Economic Efficiency* – Այս տերմինով բնութագրվում է ապրանքների և ծառայությունների առավել օպտիմալ արտադրությունն ու սպառումը: Սովորաբար դա տեղի է ունենում, երբ ապրանքների ու ծառայությունների գներն արտահայտում են դրանց սահմանային արժեքը: Տնտեսական արդյունավետության հնարավոր է հասնել ծախսերի կրճատման միջոցով, սակայն ավելի նպատակահարմար է այս հասկացությունը բնութագրել որպես գործողությունների մի ամբողջություն, որոնք ուղղված են զուտ արժեքի ավելացմանը և պարունակում են, առանց սահմանափակման, նաև ծախսերի կրճատումները:

173. Տնտեսական կարգավորում – *Economic Regulation* – արտադրական հզորությունների, էլեկտրաէներգիայի ներկրման և հաղորդման հնարավորությունների հայտարարագրման, պլանավորման և կարգավարման միջոցը, որը հանգեցնում է նվազագույն ծախսումներով էլեկտրաէներգիայի մատակարարման՝ հուսալիության եւ անվտանգության ցուցանիշների պահպանմամբ:

174. Տրոհում – *Fission* – Սա գործընթաց է, որի ժամանակ համապատասխան տեսակի ատոմի միջուկները, նեյտրոնների հարվածների տակ բաժանվում են (սովորաբար) երկու ավելի թեթև տարրերի միջուկների արձակելով մեծ քանակությամբ էներգիա և երկու կամ ավելի նետրոններ:

175. Տուրբին – *Turbine* – Մեքենա, որում առաջանում է մեխանիկական ռոտացիոն (պտտվող) ուժ՝ օգտագործելով հեղուկ նյութերի հոսքի էներգիան (օրինակ, ջրի, շոգու կամ տաք գազերի): Տուրբինները այդ հոսքերի կինետիկ էներգիան վերածում են մախանիկականի՝ իմպուլսի և ռեակցիայի, կամ դրանց համադրության սկզբունքների հիման վրա:

176. Ցածր ակտիվության թափոններ – *Low-level Waste* – Ցածր ակտիվության ռադիոկատիվ թափոնները ընդհանուր տերմին է, որն օգտագործվում է բնութագրելու խիստ տարրատեսակ թափոնները: Արդյունաբերական գործարանները, հիվանդանոցները, կրթական օջախները, գիտահետազոտական ինստիտուտները, ինչպես նաև մասնավոր և պետական լաբորատորիաները, միջուկային կայանները, վառելիք արտադրող կայանները օգտագործելով ռադիոակտիվ նյութեր ստեղծում են ցածր ակտիվության թափոններ, որպես իրենց բնականոն գործունեության մաս: Նշված թափոնները ստեղծվում են ֆիզիկական և քիմիական տարբեր ձևերով և ունեն աղտոտման տարբեր աստիճաններ:

177. Ցանցային օրենսգիրք – *Grid Code* – Այս փաստաթուղթն իրականացնում է էներգահամակարգի գործունեության արտադրական և տնտեսական հիմնադրույթների կանոնակարգումը: Նրանում ներառնված են մանրամասն տեղեկություններ Ազգային Ցանցին միացման, համակարգի շահագործման գրաֆիկների կազմման, շուկայի մասնակիցների ֆինանսատենտեսագիտական հարաբերությունների կանոնակարգման, անվտանգ շահագործման կոորդինացման և հուսալիության ապահովման հիմնադրույթները և սարքավորումների աշխատունակության պահանջվող նորմերը:

178. Ուղղահայաց ինտեգրացիա – *Vertical Integration* – Սա այնպիսի կառուցվածք է, որի դեպքում նույն ընկերությանն են պատկանում ապրանքի կամ ծառայության և՛ արտադրության, և՛ վաճառքի, և՛ առաքման համար անհրաժեշտ բոլոր միջոցները: Էլեկտրաէներգետիկ բնագավառում ուղղահայաց ինտեգրված կառուցվածքը ենթադրում է արտադրող կայանների, փոխադրող և բաշխող համակարգի, այսինքն՝ էլեկտրաէներգիա մատակարարելու համար անհրաժեշտ բոլոր գործոնների պատկանելությունը մեկ անձի կամ ընկերության:

179. Ունիվերսալ ծառայություն – *Universal Service* – Հիմնական կարիքների համար տրամադրվող էլեկտրաէներգիայի ծառայություն, որը հասանելի է հանրության բոլոր խավերին՝ անկախ եկամտի չափից:

180. Ուրան – *Uranium* – Ռադիոակտիվ տարր, որի ատոմային համարն է 92. համարվում է բնական հանածո, որի ատոմային կշիռը կազմում է 238: Երկու հիմնական բնական իզոտոպերն են՝ ուրանը -235 (0.7 տոկոս բնական ուրան), որը տրոհվում է, և ուրանը – 238 (99.3 տոկոս բնական ուրան), որը տրոհվում է արագ նեյտրոնների և համարվում է միջուկային վառելիքի հումք: Բնական ուրանը նաև պարունակում է շատ քիչ քանակի ուրան-234:

181. Ուրանային վառելիքի արտադրող կայան – *Uranium Fuel Fabrication Facility* – Կայան, որը (1) արտադրում է ռեակտորի վառելիք ստորև նշվածների համար. (i) վառելիքային նյութերի պատրաստում, (ii) վառելիքային նյութերի նախընտրելի ֆորմայի ստեղծում, (iii) պաշտպանիչ թաղանթի կիրառում, (iv) խոտան նյութերի վերականգնում, և (v) նշված գործարքների հետ կապված պահուստի ստեղծում, կամ (2) իրականացնում է հետազոտական և մշակման աշխատանքներ:

182. Փաթեթի (պորտֆելի) կառավարում – *Portfolio Management* – Էներգետիկայում այս տերմինով նկարագրվում է այն գործառույթը, որը կապված է ռեսուրսների պլանավորման և ապահովման հետ՝ ավանդական էներգետիկ համակարգի կառուցվածքի ներքո:

183. Փոխադրման գիծ – *Transmission Line* – Հաղորդիչներից, մեկուսիչներից և օժանդակ կառույցներից ու սարքավորումներից բաղկացած համակարգ, որն օգտագործվում է արտադրողների և ստացող կետերի միջև ընկած երկար տարածությունների վրա մեծ քանակությամբ բարձր լարման էլեկտրաէներգիա տեղափոխելու համար:

184. Փոխադրման համակարգ (էլեկտրական) **– *Transmission System*** *(electric)* **–** Այսպես է կոչվում էլեկտրաէներգիայի փոխկապակցված փոխադրման գծերի և համապատասխան սարքավորումների համալիրը, որով առաքման և վերջնական սպառողների օգտագործման կամ այլ էլեկտրաէներգետիկ համակարգերին միանալու ելքային կետերի միջև էլեկտրաէներգիա է տեղափոխվում:

185. Փոխադրում (էլեկտրականություն) – *Transmission* *(electric)* **–** Էլեկտրաէնեգետիկայում փոխադրում ասելով հասկանում ենք էլեկտրական էներգիայի շարժը կամ տեղափոխումը, որն իրականացվում է փոխկապակցված գծերի և համապատասխան սարքա-



վորումների միջոցով՝ միացնելով իրար առաքման և վերջնական սպառողների օգտագործման կամ այլ էլեկտրաէներգետիկ համակարգերին միանալու ելքային կետերը: Փոխադրումն ավարտվում է այնտեղ, որտեղ էլեկտրաէներգիան փոխակերպվում է՝ վերջնական սպառողներին բաշխելու համար:

186. Փոխադրումից կախված ծառայություն մատուցող համակարգ – *Transmission-dependent Utility* – Սրանք այն համակարգերն են, որոնք մատակարարներից գնված հոսանքն ստանալու համար իրենց հույսը դնում են հարևան համակարգերի վրա: Այլ կերպ ասած՝ այս համակարգերը չունեն իրենց սեփական արտադրողները, և կախված են ուրիշների փոխադրման համակարգերից:

187. Փոխկապակցված համակարգ – *Interconnected System* – Երկու կամ ավելի առանձին համակարգերից բաղկացած համակարգ, որը գործում է միջհամակարգային կապերի շնորհիվ:

188. Օժանդակ ծառայություններ – *Ancillary Services* – Ծառայություններ, որոնք օժանդակում և ապահովում են և աջակցում են արտադրողից սպառող էլեկտրական էներգիայի փոխադրման հուսալիությունը: Նման ծառայությունների թվին են պատկանում բեռի կարգավորումը, շրջանառու և ոչ շրջանառու պահուստի սպասարկումը, փոխարինման պահուստի սպասարկումը և լարման կայունության աջակցությունը:

189. Օլիգոպոլիա – *Oligopoly* – Մի քանի վաճառողներ, որոնք կարող են ճնշում գործադրել՝ հսկելով շուկայի սակագները:

190. Օտարում – *Divestiture* – Որևէ էներգաընկերության գործառույթի անջատումը այլ գործառույթներից՝ վաճառելով (օտարելով) կամ այլ կերպ փոխելով այդ գործառույթին կապված ակտիվների նկատմամբ սեփականությունը: Հիմնականում խոսքը արտադրության միջոցների օտարման մասին է, որոնք այլևս չեն հանդիսանում հաղորդող և բաշխող միջոցների սեփականատեր-բաժնետերերի սեփականությունը:

191. Ֆոտոէլեկտրական մարտկոց – *Photovoltaic Cell* *(PVC)* **–** Սա էլեկտրոնային սարք է, որը բաղկացած է կիսահաղորդիչ նյութերի շարքից, որոնք ստեղծում են միացություն (միմյանց կպցված են տարբեր էլեկտրոնային բնութագիր ունեցող նյութեր), ինչպես նաև էլեկտրական կոնտակտներից, որոնք կարող են լույսը միանգամից փոխակերպել էլեկտրական հոսանքի:

192. Ֆոտոէլեկտրական և արևային ջերմային էներգիա – *Photovoltaic and Solar Thermal Energy* (տերմինի կիրառությունը էներգետիկ համակարգում) – էլեկտրամագնիսական ալիքների տեսքով արևի արտացոլված էներգիան է, որը էլեկտրաէներգետիկ համակարգում մարտկոցների և էներգիան հավաքող կենտրոնացնող սարքերի միջոցով փոխակերպվում է էլեկտրականության:

1. **Ancillary Services – *Օժանդակ ծառայություններ* –** Services that ensure reliability and support the transmission of electricity from generation sites to customer loads. Such services may include: load regulation, spinning reserve, non-spinning reserve, replacement reserve, and voltage support.

2. **Availability** – ***Պատրաստականություն* –** The state of operating readiness of the transmission lines to provide electricity in compliance with the contractual obligations at the capacity specified in a contract.

3. **Average Cost – *Միջինացված ծախսեր* –** The revenue requirement of a utility divided by the utility's sales. Average cost typically includes the costs of existing power plants, transmission, and distribution lines, and other facilities used by a utility to serve its customers. It also includes operating, maintenance, tax, and fuel costs.

4. **Biomass – *Կենսագազ* –** Organic non-fossil material of biological origin constituting a renewable energy source.

5. **Biogas Power Plant – *Կենսագազային էլեկտրակայան* –** A power generation source where biogas is used to generate electricity.

6. **Bottleneck – *Սահմանափակ թողունակությամբ անցման կետ* –** A point on the transmission or distribution system where limited capacity exists that jeopardizes regular or effective operation of the system. For instance, if there is a plant of 300 MW capacity and corresponding consumption, then a transmission line of 100 MW capacity between the generator and consumers has limited capacity and can become a bottleneck.

7. **Bulk Power Supply – *Մեծաքանակ էլեկտրական էներգիայի մատակարարում* –** Often this term is used interchangeably with wholesale power supply. In broader terms, it refers to the aggregate of electric generating plants, transmission lines, and related-equipment. The term may refer to those facilities within one electric utility, or within a group of utilities in which the transmission lines are interconnected.

8. **Capacity – *Հզորություն*** – The amount of energy supplied, transmitted and consumed at any given time expressed in Megawatts.

9. **Capacity Charge – *Հզորության /հզորություն ապահովելու/ վճար* –** That portion of the charge for electric service based on the peak load furnished within a time period according to the established tariff.

10. **Capital Cost – *Հիմնական միջոցների արժեք*** – The cost of field development and plant construction and the equipment required for industry operations.

11. **Coal – *Ածուխ* –** A readily combustible black or brownish-black rock whose composition, including inherent moisture, consists of more than 50 percent by weight and more than 70 percent by volume of carbon-materials. It is generally formed from plant remains that have been compacted, hardened, chemically altered, and metamorphasized by heat and pressure over time.

12. **Cogeneration – *Համատեղ-արտադրություն* –** The production of electrical energy and another form of useful energy (such as heat or steam) through the sequential use of energy.

13. **Co-generator – *Համատեղ-արտադրող կայան* –** A generating facility that produces electricity and another form of useful thermal energy (such as heat or steam), used for industrial, commercial, heating, or cooling purposes.

14. **Combined Cycle – *Համակցված արտադրաեղանակ* –** An electric generating technology in which electricity is produced from heat exhaust from one or more gas (combustion) turbines. The heat exhaust is routed to a conventional boiler or to a heat recovery steam generator for utilization by a steam turbine in the production of electricity.

15. **Combined Cycle Unit – *Համակցված արտադրող կայան* –** An electric generating unit that consists of one or more combustion turbines and one or more boilers with a portion of the required energy input to the boiler(s) provided by the exhaust gas of the combustion turbine(s).

16. **Combustion – *Այրում* –** Chemical oxidation process accompanied by the generation of light and heat.

17. **Commercial Metering – *Առևտրային հաշվառում* –** Mechanical devices used to measure consumption and demand so that services may be properly accounted for and billed.

18. **Compact Fluorescent Bulbs – *Կոմպակտ ֆլյուորեսցենտային (ցերեկային) լամպեր* –** Compact fluorescent bulbs combine the efficiency of fluorescent lighting with the convenience of a standard incandescent bulb. They are very energy efficient and last a long time.

19. **Company Confidential Information – *Ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն* –** Information on the Licensee's financial position and/or commercial secrets or other information that if publicly accessed could harm the Licensee. Company Confidential Information also includes customer information such as the billing address and private information regarding the consumers supplied by the Licensee.

20. **Compressed Natural Gas** (CNG) **– *Խտացված բնական գազ* –** Natural gas (mainly methane) that is put through a process whereby it is compressed to a pressure of or above 2,400 pounds per square inch and stored in special high-pressure containers. It is then used as a fuel for natural gas powered vehicles.

21. **Condenser – *Կոնդենսատոր* –** A large heat exchanger designed to cool exhaust steam from a turbine below the boiling point so that it can be returned to the heat source as water. In a pressurized water reactor, the water is returned to the steam generator. In a boiling water reactor, it returns to the reactor core. The heat removed from the steam by the condenser is transferred to a circulating water system and is exhausted to the environment, either through a cooling tower or directly into a body of water.

22. **Congestion – *Գերբեռնվածություն* –** Systems overload. A condition that occurs when power that is generated lacks the infrastructure or transfer capacity to be moved or utilized to meet demand or preferred schedules for electricity transmission.

23. **Connection Agreement of Generation** – ***Միացման պահանջներ*** – The contractual agreements and legal relationships that grant the right to the consumer to be connected to the National Network/Generation Plants, High Voltage and Distribution Network pursuant to the Grid Code and the Republic of Armenia effective laws.

24. **Consumer** – ***Սպառող*** – An entity or person who acts as a customer of energy, creating demand and utilizing a supply of electric energy (capacity), natural gas and/or thermal energy or an entity who enters into the energy supply contract with the licensee.

25. **Cooling Tower – *Հովացնող աշտարակ* –** A heat exchanger designed to aid in the cooling of water that was used to cool exhaust steam exiting the turbines of a power plant. Cooling towers transfer exhaust heat into the air instead of into a body of water.

26. **Core – *Միջուկ* –** The central portion of a nuclear reactor containing the fuel elements, moderator, neutrons, and support structures.

27. **Cost-of-service Regulation – *Ծառայության արժեքի վրա հիմնված կարգավորում* –** A traditional electric utility regulation model where a utility is allowed to set rates based on the cost of providing service to customers and the right to earn a limited profit.

28. **Crude Oil – *Հում նավթ* –** A mixture of hydrocarbons that combines to form an unrefined petroleum liquid that occurs in natural underground reservoirs. Crude oil remains a liquid and is then passed through surface separating facilities. Crude oil is refined to produce a wide array of petroleum products, including heating oils; gasoline, diesel and jet fuels; lubricants; asphalt; ethane, propane, and butane; and many other products used for their energy or chemical content.

29. **Dam – *Ամբարտակ* –** A physical barrier constructed across a river or waterway to control the flow or to raise the level of water. The purpose of construction may be flood control, irrigation needs, hydroelectric power production, and/or recreation usage.

30. **Decay (radioactive) – *Ռադիոակտիվ նյութերի տրոհում* –** The decrease in the amount of any radioactive material with the passage of time due to the spontaneous emission from the atomic nuclei of either alpha or beta particles, often accompanied by gamma radiation.

31. **Decommissioning – *Ատոմակայանի շահագործումից դուրս բերում* –** The process of closing down a facility followed by reducing residual radioactivity to a level that permits the release of the property for unrestricted use.

32. **DECON – *Անհապաղ ապամոնտաժում* –** A method of decommissioning in which the equipment, structures, and portions of a facility and site containing radioactive contaminants are removed and safely buried in a low-level radioactive waste landfill or decontaminated to a level that permits the property to be released for unrestricted use shortly after cessation of operations.

33. **Decontamination – *Վարակազերծում* –** The reduction or removal of contaminating radioactive material from a structure, area, object, or person. Decontamination may be accomplished by: (1) treating the surface to

remove or decrease the contamination, (2) letting the material stand so that the radioactivity is decreased as a result of natural radioactive decay, or (3) covering the contamination to shield or attenuate the radiation emitted.

34. **Demand-Side Management (DSM) – *Պահանջարկի կողմի կառավարում*** – Planning, realization and assessment of those projects funded by the utilities that have the purpose of influencing the amount and time of energy consumed by consumers.

35. **Deregulation – *Ապակարգավորում*** – The elimination of widespread government controls on ownership of generation, transmission, and distribution.

36. **Direct Access – *Անմիջական մուտքի իրավունք*** – The ability of a retail customer to purchase commodity electricity directly from the wholesale market rather than through a local distribution utility. (See also Retail Competition).

37. **Disaggregation** – ***Մասնատում*** – The functional separation of a vertically integrated utility into smaller, individually owned business units (i.e., generation, dispatch/control, transmission, distribution). The terms "de-integration" and "disintegration" are sometimes used to mean the same thing. (See also "Divestiture").

38. **Distribution Utility (Disco) – *Բաշխիչ ցանց*** – Unified system of electric energy or natural gas or thermal energy consisting of distribution lines, substations, gas regulating nodes and other equipment operated by the distribution utility (licensee) where electric energy, natural gas and thermal energy is transmitted/transported from the Generator (source) and/or Transmitter to consumers (end-users). Initiation, operation and control of this system is implemented by the distribution utility (licensee).

39. **Divestiture – *Օտարում*** – The stripping of one utility function from the others by selling (disposing) or in some other way changing the ownership of the assets related to that function. Most commonly associated with disposing of generation assets so they are no longer owned by the shareholders who own the transmission and distribution assets.

40. **Economic Efficiency – *Տնտեսական արդյունավետություն*** – A term that refers to the optimal production and consumption of goods and services. This generally occurs when prices of products and services reflect their marginal costs. Economic efficiency gains can be achieved

through cost reduction, but it is better to think of the concept as actions that promote an increase in overall net value (which includes, but is not limited to, cost reductions).

41. **Economic Regulation** – ***Տնտեսական կարգավորում*** – Declarations, planning and dispatch of generation capacities, electricity import and transmission capabilities causing compliance with reliability and safety indicators of electricity supply with least costs.

42. **Electric Current** – ***էլեկտրական հոսանք*** – The naturally occurring flow of electric charge. It is how electricity when harnessed flows (moves) threw power lines to reach different sources. The preferred unit of measure is the *ampere*.

43. **Electric Energy** – ***էլեկտրական էներգիա*** – The ability of an electric current to produce work, heat, light, or other forms of energy measured in kilowatt hours.

44. **Electric Generator** – ***էլեկտրաէներգիա արտադրող կայան*** – A facility that produces electricity, commonly expressed in kilowatt hours (kWh) or megawatt hours (MWh). Electric generators include electric utilities and independent power producers. They also include small, portable electricity generators run on various fuels.

45. **Electrical System Energy Losses (Losses)** – ***էլեկտրաէներգետիկ համակարգի էներգիայի կորուստներ*** – Due to technical and natural occurrences, a small amount of energy is generally lost during generation, transmission, and distribution of electricity. These losses can increase due to human error, theft, or technical malfunction.

46. **Energy and Capacity Balance** – ***Հզորության և էլեկտրաէներգիայի հաշվեկշիռ*** – Characteristics of electricity generation and consumption according to which electricity generation and consumption shall be equal in order to achieve balance.

47. **Energy Charge** – ***էներգիայի վճար*** – That portion of the bill for electric service based on the electric energy (kWh) consumed by the customer.

48. **Energy Efficiency** – ***էներգաարդյունավետություն*** – Using less energy/electricity to perform the same function. Programs designed to use electricity more efficiently — doing the same with less. Energy efficiency is distinguished from Demand Side Management (DSM) programs in that the

latter are utility-sponsored and -financed, while the former is a broader term not limited to any particular sponsor or funding source. "Energy conservation" is a term which has also been used to mean energy efficiency but it has the connotation of using limited energy in order to save rather than using less energy to do the same function. Many people often use these terms interchangeably.

49. **Entomb – *Թաղում* –** A method of decommissioning in which radioactive contaminants are encased in a structurally long-lived material, such as concrete. The entombment structure is appropriately maintained, and continued surveillance is carried out until the radioactivity decays to a level permitting decommissioning and ultimate unrestricted release of the property.

50. **Environmental Impact Assessment (EIA) – *Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում* –** A report that documents the information required to evaluate the environmental impact of a project. It informs decision-makers and the public of the reasonable alternatives that would avoid or minimize adverse impacts or enhance the quality of the environment.

51. **Export (Import) Point – *Արտահանման (ներկրման) կետ* –** Point in the intersystem electric transmission line where export (import) is implemented.

52. **Feasibility Study – *Նախագծի տեխնիկա-տնտեսական հիմնավորում* –** An assessment conducted on the preliminary technical and economic value of project.

53. **Fission – *Տրոհում* –** The process whereby an atomic nucleus of radioactive materials, after capturing a neutron, splits into (generally) two nuclei of lighter elements, with the release of substantial amounts of energy and two or more neutrons. Fission is the basis for the creation of nuclear energy harnessed (generated) for usage at nuclear power facilities.

54. **Fusion Reaction – *Միջուկային սինթեզի ռեակցիա* –** A reaction in which at least one heavier, more stable nucleus is produced from two lighter, less stable nuclei. Reactions of this type are responsible for an enormous release of energy, as in the energy of stars, for example.

55. **Fixed Cost** (expense) **– *Հաստատուն ծախս* –** An expenditure or expense that does not vary with volume or level of activity.

56. Fixed Operating Costs – *Հաստատուն շահագործման ծախսեր* – Costs other than those associated with capital investment that do not vary with operation, e.g. maintenance and payroll.

57. Forced Outage – The shutdown of a generating unit, transmission line, or other facilities for emergency reasons or a condition in which the generating equipment is unavailable for load due to unanticipated breakdown. E.g. storms causing transmission lines to crash or a flash flood overwhelming a damn and hydro-station and causing it to shut temporarily.

58. Fossil Fuels – *Հանածո վառելիքներ* – Fuels (coal, oil, natural gas, etc.) that result from the compression of ancient plant and animal life formed over millions of years.

59. Fuel Cycle – *Վառելանյութի ցիկլ* – The entire set of sequential processes or stages involved in the utilization of fuel, including extraction, transformation, transportation, and combustion. Emissions generally occur at each stage in the fuel cycle.

60. Gas Pipeline – *Գազի խողովակաշար* – Series of pipes which have valves, compressor facilities, and metering. Gas pipelines are used to transport gas from one point to another, usually from a point near the extraction site or treatment facilities to other pipelines or consumption points. This term sometimes refers to the company that deals with operation of this system.

61. Generating Capacity – *Արտադրող հզորություն* – The amount of electrical power a power plant can produce. Potential for electricity generation is expressed in *watt*, *kilowatt* or *megawatt*. Capacity can be installed (existing); available (ready to be connected with the network at any time); working (being used currently) and reserve (portion of the available capacity not used at the given time).

Installed capacity = (working + reserve) + reconstructed + conserved

62. Generating Facility – *Արտադրող տեղակայանք* – An existing or planned location or site where electricity is or will be produced.

63. Generation Ancillary Needs – *Կայանի սեփական կարիքներ* – Electricity necessary for the operation of a generation plant.

64. Generation Company (GENCO) – *Արտադրող ընկերություն* – Pursuant to the Republic of Armenia (RoA) Energy Law, a generation company, is a legal entity holding an electricity (capacity) generation license. GENCO is a regulated or non-regulated entity (depending upon the industry structure) that operates and maintains existing generating plants.

65. Geothermal Energy – *Գեոթերմալ էներգիա* – The heat energy that is produced by natural processes inside the earth. It can be taken from hot springs, reservoirs of hot water deep below the ground, or by breaking open the rock itself. Geothermal energy is then utilized to produce various types of applicable energy such as electricity or heat for consumption.



66. Gigawatt (GW) – *Գիգավատտ* – One billion watts or one thousand megawatts.

67. Good Utility Practice – *Սպասարկման առկա դրական փորձ* – Practices, methods, and legislation that can be expected to accomplish the desired result of the lowest reasonable cost consistent with good business practices (transparency and accountability), reliability, safety and expedition.

68. Greenhouse Effect – *Ջերմոցային էֆեկտ* – The effect of the Earth's atmosphere, due to certain gases, in trapping heat from the sun; the atmosphere acts like a greenhouse to insulate the Earth and promote climate change.

